

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Քոչարեան Իզուր Իշխանութեան Վերադարձի Յոյսեր Կը Փայփայէ

Խորհրդարանական «Հայաստան» դաշինքը որոշած է 2026-ի Ազգային ժողովի ընտրութիւններուն մասնակցիլ նոյն ձեւաչափով՝ Ռոպերթ Քոչարեանը ունենալով որպէս իր վարչապետի թեկնածուին: Ռոպերթ Քոչարեանն ու ՀՀԴ-ն որոշած են շարունակել իրենց համագործակցութիւնը, որոնց միացած է նաեւ «Առաջ» կուսակցութիւնը:

Այս առթիւ պետք է վերաբաղ մը ընել Ռոպերթ Քոչարեանի անձնական ու քաղաքական կենսագրութեան, որոնց առանցքը կը կազմէ երկրի հարստութեան իւրացումը իր եւ իր շրջապատին կողմէ, ու մենատիրական համակարգի մը հաստատումը:

Քոչարեան Արցախէն գալով Հայաստան երկու անգամ՝ 1998-ին եւ ապա 2003-ին կեղծուած ընտրութիւններով գրաւեց նախագահի աթոռը: Այդ տարիներուն իր կուտակած հարստութեամբ ան դարձաւ Հայաստանի ամենէն հարուստ մարդը ու կը շարունակէ մնալ այդպիսին:

Ան Հայաստանի մէջ հիմը դրաւ քրեաօլիկարխիկ համակարգին մը, որուն արդիւնքը եղաւ այն, որ երկրին հարստութիւնը կեղրոնացաւ սահմանափակ թիւով իր կողմնակիցներուն մօտ, որոնք դարձան իր իշխանութեան հիմնական յենարանը՝ զուրկ ժողովրդային աջակցութենէն ու համակրանքէն:

Քոչարեանի իշխանութիւնը յատկանշուեցաւ երկու առունալի իրադարձութիւններով՝ «Հոկտեմբեր 27» եւ «Մարտի 1», որոնցմէ առաջինին զոհ գացին երկրի ամբողջ վերնախաւը՝ Ազգային ժողովի նախագահով, վարչապետով ու աւելի քան տասը կառավարութեան անդամներով: Երկրորդի պարագային հերթական կեղծուած ընտրութիւններէն ետք, ժողովրդային բողոքի շարժումը խեղդուեցաւ բանակը հանելով ցուցարարներու դէմ, որոնց ընթացքի երեւանի փողոցներուն վրայ սպանուեցան տասը քաղաքացիներ: Ընդհանուր առմամբ Քոչարեանի իշխանութեան տարիներուն տեղի ունեցան 39 քաղաքական սպանութիւններ:

Ան իր իշխանութեան տարիներուն կնքեց «գոյք պարտքի դիմաց» գործարքը՝ Ռուսաստանին յանձնելով երկրի ռազմավարական նշանակութեան՝ ուժանիւթի,

Շար.ը էջ 6

Չենք Թողեր Որ Հայաստանը Միայնակ Դիմակայէ Արտաքին Միջամտութեան. ԵՄ Բարձր Ներկայացուցիչ Քայա Քալաս



ԵՄ արտաքին գործերու եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Քայա Քալաս

Հայաստանի խնդրանքով եւրամիութիւնը պիտի տեղակայէ յատուկ արագ արձագանգման խումբ՝ երկրի ընտրութիւններէն առաջ հիպոթետիկ սպառնալիքներուն հակազդելուն օգնելու համար: Այս մասին յայտնած է ԵՄ արտաքին գործերու եւ անվտանգութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Քայա Քալաս:

«Մեր տարածաշրջանին մէջ

ժողովրդավարութեան կայունութեան աջակցութիւնը կը շարունակէ մնալ կարեւորագոյն: Մենք չենք թողեր, որ Հայաստանը միայնակ դիմակայէ արտաքին միջամտութեան», - ըսած է Քալաս՝ Պրիւքսէլի մէջ ԵՄ Արտաքին գործերու խորհուրդի նիստէն չեսոյ տեղի ունեցած մամուլի ասուլիսին:

Շար.ը էջ 6

ՀԱՍ-ի Կալայի Ընթացքին Ամերիկեան Քաղաքական Դէմքեր Իրենց Զօրակցութիւնը Յայտնեցին Հայութեան Ու Հայաստանին



ՀԱՍ-ի խումբ մը վարչակազմերն ու համակիրները երեկոյի ընթացքին

Հայ նորահաս սերունդին մօտ իր քաղաքացիական պարտաւորութիւնները վառ պահելու առաջադրանքներով կազմաւորուած Հայ Ամերիկեան Խորհուրդը՝ (ՀԱՍ) իր օգտաշատ գործունէութեամբ արդէն ծանօթ է տեղական շրջանակներուն:

Մարտի 14-ին, Կլենտլլի «Վերանտա» գեղազարդ սրահէն ներս տեղի ունեցած ճաշկերոյթ-Կալա-

յին ներկայ էին ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Տոքթ. Համբիկ Սարաֆեան, կեդրոնի ալլընկերներ, ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի ատենապետ Միհրան Խաչատուրեան եւ ՀԱՍ-ի բարեկամներ:

Օրուան հանդիսավար՝ Ամերիկեան հեռատեսիլի լրագրող եւ

Շար.ը էջ 7

Հնչակեան Թեկնածուները Յաղթած են Ֆրանսայի Ալֆորվիլի Քաղաքապետական Ընտրութիւններուն



Սարո Սարտիրեան



Լենա Մելքոնեան

Ֆրանսայի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ողջունած է Ալֆորվիլի համայնքային ընտրութիւններուն Լիւք Քարվոնասի գլխաւորած ցանկին յաղթանակը եւ իր շնորհաւորութիւնները յղած է քաղաքապետին ու ամբողջ խումբին՝ Ալֆորվիլի բնակիչներուն կողմէ անոնց նկատմամբ վերահաստատուած վստահութեան համար:

ՄԴՀԿ կը տեղեկացնէ, որ իր երկու ներկայացուցիչները՝ Լենա Մելքոնեան եւ Սարո Մարտիրեան մաս կը կազմեն քաղաքապետարանին նոր մեծամասնութեան: Անոնց նուիրումը կը շարունակէ քաղաքացիական մասնակցութեան եւ հանրային պատասխանատուութեան այն աւանդութիւնը, որ կը բնորոշէ մեր շարժումը իր հիմնադրութենէն ի վեր:

Յայտարարութիւնը իր խորին երախտագիտութիւնը կը յայտնէ Հնչակեան Կուսակցութեան անդամներուն, գործիչներուն եւ համակիրներուն, որոնք իրենց համախմբուած գործունէութեամբ,

Շար.ը էջ 6

Օտարերկրեայ Տեղեկատուական Միջամտութիւններն Ու Ներքին Մանիպուլիացիաներն Անտեսելու Վտանգը

ՏԻՊՈՒՆ ԳՐԻՊՈՐԵԱՆ

Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններին մնացել է երեք ամիս եւ երկրում քննարկումներն աւելի ու աւելի են կեդրոնանում օտարերկրեայ տեղեկատուական մանիպուլիացիաների եւ միջամտութեան (FIMI) թեմայի շուրջ:

Հայաստանի միջազգային գործընկերները գրեթէ բոլոր ջանքերն այժմ ուղղուած են երկրին աջակցելուն՝ դիմակայելու արտաքին դերակատարներին, հիմնականում՝ Ռուսաստանի կողմից բխող հիբրիդային սպառնալիքներին: Այսօր Հայաստանում տեղի ունեցող գրեթէ բոլոր քննարկումները, կլոր սեղանները եւ համաժողովները պատուում են օտարերկրեայ միջամտութեան ռիսկերի եւ հիբրիդային սպառնալիքների շուրջ:

Որոշ ընդդիմադիր կուսակցութիւններ, քաղաքական գործիչներ եւ լրատուամիջոցներ թերագնահատում են այս սպառնալիքը՝ պնդելով, թէ այն ընդհանրապէս գոյութիւն չունի: Որպէս քաղաքացիական հասարակութեան կազմակերպութիւն, որը պարբերաբար թիրախաւորում է օտարերկրեայ չարամիտ դերակատարների կողմից, մենք կարող ենք հերքել այդ պնդումը կոնկրետ օրինակներով: Միայն անցեալ շաբաթուայ ընթացքում ժողովրդավարութեան



եւ անվտանգութեան տարածաշրջանային կեդրոնը ենթարկուել է երկու ֆիզիկական յարձակման, որոնց ընթացքում անյայտ անձինք փորձել են հասանել լրատու ստանալ մեր տուեալներին՝ իշխող կուսակցութեան եւ Ազգային ժողովի անունից ուղարկուած կեղծ հաշիւների նամակների միջոցով: Կիբեռանվտանգութեան փորձագէտները այս արշաւների հետեւում յայտնաբերել են Ռուսաստանի հետ կապուած դերակատարներին:

Factor TV-ի վերջերս կատարած հետաքննութիւնը պարզել է, որ Երեւանում անվճար բաժանում է ապատեղեկատուութեամբ լեցուն մի երկլեզու թերթ, որը կոչւում է

«Wyoming Star»: Երբ Factor TV-ն կապ էր հաստատել լրատուամիջոցի հետ կապ ունեցող անձի հետ, վերջինս հեռախօսազրոյցի ժամանակ ակամայ խոստովանել է, որ պատրաստուած է մեկնել Մոսկուա՝ թերթերի նոր խմբաքանակ բերելու համար: Հետագայում է, որ նոյն անունով մի առցանց լրատուամիջոց 2025-ի Յուլիսին դիմել էր մեզ՝ հայ-ատրպէյճանական խաղաղութեան գործընթացի վերաբերեալ մեկնաբանութիւն խնդրելով: Այն փաստը, որ վաչոյի գիտնականը մէկը կարող էր հետաքրքրուած լինել հայ-ատրպէյճանական հակամարտութեան տեխնիկական մասնաբաժաններով, անմիջապէս կաս-

Կաճներ յարուցեց:

Մի քանի պարզ որոնումներից յետոյ ակնյայտ դարձաւ, որ սա այսպէս կոչուած doppelganger (նմանակող) կաջ էր՝ ստեղծուած յատուկ Հայաստանի եւ Մոլդովայի լարաններին թիրախաւորելու համար: Այժմ նոյն գործողութիւնն ընդլայնուել է դէպի օֆլայն տիրոյթ՝ Հայաստանում անվճար թերթի տարածման միջոցով:

Այս կոնկրետ օրինակներից բացի, կիբեռանվտանգութեան փորձագէտների եւ փաստեր ստուգող լրագրողների շրջանում կայ լայն կոնսենսուս այն մասին, որ նախընտրական շրջանում Ռուսաստանի հետ կապուած ապատեղեկատուական ենթակառուցուածք է ստեղծուել, որը թիրախաւորում է Հայաստանը: Այս փաստը չպէտք է վիճարկվի որեւէ լուրջ կամ ազնիւ մեկնաբանի կողմից: Միեւնոյն ժամանակ, այս արշաւների ծաւալն ու վերջնական նպատակները մնում են անորոշ:

Օրինակ, Հայաստանում կիբեռանվտանգութեան ոլորտի առաջատար փորձագէտ Արթուր Պապեանը վերջերս տեղի ունեցած ժողովրդավարական անվտանգութեան հայկական երրորդ համաժողովի իր մասնակցութեամբ պանելային քննարկմանը նշել էր, որ ռուսական միջամտութեան մակարդակը

Շար.ը էջ 6

Հայաստանում Պատմական Փաստի Իրոպի Մեկնաբանութեան Համար ԱԳ Նախարարի ԵՆ «Խնդրել», Որ Հրաժարական Տայ

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

ԱՄՆ փոխնախագահ ձեյ Տի վենսի Հայոց ցեղասպանութեան յուշահամալիր այցն իր սկզբանէ տեղեկատուական սկանդալի տեղիք է տուել: Փետրուարի 10-ի առաւօտեան տարածուել է հետեւեալ հաղորդագրութիւնը. «Այսօր փոխնախագահ վենսը եւ երկրորդ տիկին Ուշայ վենսը Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրում մասնակցել են ծաղիկներ խոնարհելու արարողութեանը՝ յարգելու 1915 թուականի Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը»:

Երեւանից վենսի Պաքու ուղեւորութեանը առաջ այդ գրառումը եւ կից լուսանկարները հեռացուել են: վենսի խօսանքը այդ գրառումը որակել է «անձնակազմի կողմից սխալմամբ տեղադրուած», բայց կարելի է ենթադրել, որ նման «խնդրանք» նրան փոխանցուել է վաչիկտոնից: Նախաձեռնութիւնը, հաւանաբար, թուրքական է եղել:

Փետրուարի 11-ին, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ դէմ առ դէմ հանդիպման յաջորդ օրը, ձեյ Տի վենսը տիկնոջ հետ Պաքուում այցելել է «չահիդների ծառուղի»: ԱՄՆ փոխնախագահը եւ երկրորդ տիկինը ծաղիկներ են խոնարհել «ծառուղու» միայն հատուածում, որտեղ թաղուած են 1990թ. Յունուարի 20-ին Պաքուում խորհրդային զօրքերին ցոյց տուած զինուած դիմադրութեան ժամանակ սպանուածները: ձեյ Տի վենսը եւ երկրորդ տիկին Ուշայ վենսը խախտել են Ատրպէյճանի պետական արարողակարգը եւ ծաղիկապակ չեն տեղադրել «համազգային

առաջնորդ» Հէյդար Ալիեւի գերեզմանին: Ատրպէյճանական մամուլն, ի հարկէ, այդ մասին ոչինչ կամ գրեթէ ոչինչ չի գրել, բայց Եւրոպայում ատրպէյճանական վտարանդիութեան մի շարք ներկայացուցիչներ համարել են, որ Ուշայի գլխով «չի ճանաչում Ալիեւներին ժառանգական իշխանութիւնը»:

Ինչպէս կարելի է եզրակացնել, վենսի Պաքու այցի արարողակարգային եւ տեղեկատուական ֆոնը աւելի բարդ է ստացուել, քան Երեւանում: Տողերիս հեղինակը առնուազն երեք անգամ դիտարկել է, որ Պաքուում վենսի այցով «առանձնակի հիացած» չեն:

վենսի Հայաստան եւ Ատրպէյճան այցից մէկ ամիս յետոյ յայտնի է դարձել, որ Յեղասպանութեան թանգարան ինստիտուտի տնօրէնը «պաշտօնից ազատուել» է, իսկ Մարտի 12-ին վարչապետ Փաշինեանը մամուլում տարածուած տեղեկութիւնը ոչ միայն հաստատել է, այլեւ հանրաճանաչել, որ դա տեղի է ունեցել իր «խնդրանքով»: Նա մանրամասնութիւններ, բնականաբար, չի յայտնել, բայց ասել է, որ պետութիւնը պէտք է ունենայ եւ իրականացնի «մէկ արտաքին քաղաքականութիւն»:

Ամբողջ ընդդիմադիր դաշտը, տասնեակ յայտնի մտաւորականներ, նախկին դիւանագէտներ, փորձագէտներ միանշանակօրէն պնդում են, որ Փաշինեանը «կատարել է Ատրպէյճանի պահանջը»: Ոչ ոք չի «համարձակուած» անգամ մտքի ծայրից անցկացնել, որ Հայաստանի վարչապետը նման դժուար, ոչ պոպուլեար քայլի կարող էր գնալ միայն ամերիկեան

կողմի «խնդրանքով»:

Ոչ ոք չի հետեւում Ատրպէյճանի ազատութեան մէջ գտնուող յատուկէնտ ընդդիմադիր գործիչների սոցցանցային ելույթներին, գրառումներին, որտեղ նրանք պնդում են, որ Հայաստանը Միացեալ Նահանգներից «կը ստանայ միջուկային ուժակտորներ, արհեստական բանականութեան կեդրոն, չիպեր եւ չիպերի արտադրութիւն, իսկ Ատրպէյճանը՝ մօտորանաւակներ եւ ժամկենտանց «բրոնեթիւքներ»»: Իսկ ո՞վ կարող է բացառել, որ այդ քարոզչութիւնը կազմակերպուած չէ եւ մի նպատակ ունի՝ Ուշայի գլխով ներշնչել, որ «միակողմանի-հայամէտ քայլերը Ատրպէյճանում հանրային մեծ դժգոհութեան տեղիք են տալիս»:

Ի հարկէ, Յեղասպանութեան թանգարան ինստիտուտի տնօրէնի պաշտօնաթողութիւնը այն քայլը չէ, որ Ատրպէյճանի դիւանագիտական «դեմարշներ» հակակշիռ է կամ, առաւել եւս, ինչ-որ բան Պաքուի «կենցաղում» դրանից սկզբունքօրէն փոխուելու է:

Անպատկերացնելի է, թէ վարչապետ Փաշինեանը այդ մօտիվացիայով է նման ռեզոնանսային քայլի գնացել: Աւելի հաւանական է, որ նա առաջնորդուել է ԱՄՆ-ի հետ երկխօսութիւնը «բարձր նոտայի» եւ անխնդրոտ դիւանագիտական ժամկէտ պահելու սկզբունքով: Ի վերջոյ, Հայաստանում պատմական փաստի իւրովի մեկնաբանութեան համար արտաքին գործերի նախարարի են նաեւ «խնդրել», որ հրաժարական տայ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻՊՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$150.00 (First Class)
Canada \$ 250.00 (Air Mail)
Overseas \$400.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Վարչապետ Փաշինեան Դաստատեց՝ Ինք Ցուցում Տուած Է Ցեղասպանութեան Զինարկի Տնօրէնը Զեռացնելու



Վարչապետ Փաշինեան Կառավարութեան հերթական նիստէն ետք կը պատասխանէ լրագրողներու հարցերուն

«Այո՛, ես խնդրել եմ, որ նա հրաժարականի դիմում գրի՝ իմ ցուցումով», - կառավարութեան նիստէն յետոյ լրագրողներու հետ ձեպագրոցին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան: Պետութեան մէջ Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէնը չի կրնար Արցախի թեմայով գիրք նուիրել Միացեալ Նահանգներու փոխնախագահին, որովհետեւ պետութիւնը փակած է Արցախի հարցը:

«Այո՛, ես դա համարել եմ կառավարութեան վարած արտաքին քաղաքականութեանը հակառակ գործողութիւն, ես դա համարել եմ սաղորդ գործողութիւն եւ խնդրել եմ, որ դիմում գրի»:

Փաշինեան կը շարունակէ հիմնաւորել՝ երկրին մէջ արտաքին քաղաքականութիւն կը վարէ կառավարութիւնը, պետական պաշտօնեաները պիտի հետեւին անոր:

«Երբ երկրի վարչապետն ասում է, որ դարաբաղեան շարժում չկայ, օտարերկրեայ հիւրին Արցախեան հիմնահարց թեմայով գիրք նուիրելն ի՞նչ է նշանակում, էս

երկրում քանի՞ հոգի կրնայ արտաքին քաղաքականութիւն վարի», - կ'ըսէ վարչապետը:

Խումբ մը ցեղասպանագէտներ բաց նամակով մտահոգութիւն յայտնած են Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէնի պաշտօնէն իջրտա Գոգոյեանը ազատելու առնչութեամբ:

Ներկայացնելով Գոգոյեանի կատարած աշխատանքին արդիւնքը՝ ցեղասպանագէտները նշած են, որ պաշտօնէն անոր հարկադիր ազատումը սարսափեցնող ազդակ է ամբողջ աշխարհի գիտնականներուն եւ պատմաբաններուն համար: Սա, ըստ անոնց, ցոյց կու տայ, որ ինչ-ինչ պարագաներու հետաքննութիւնը կրնան փոխարինուիլ դիւանագիտական յարմարաւէտութեամբ:

Օրերս յայտնի դարձաւ, որ Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճէյ Տի Վենսի՝ Ցեղասպանութեան յուշահամալիր այցէն մէկ ամիս անց թանգարան-հիմնարկին տնօրէնը կը հեռանայ այդ պաշտօնէն:

Սամուէլ Կարապետեանի Կողմնակիցները Զանդուած Են, Որ Յունիս 7-էն Յետոյ Փաշինեանը Վարչապետ Պիտի Չըլլայ

Եթէ վարչապետ Նիկոլ Փաշինեան կը յայտարարէ, որ սահմանադրական մեծամասնութիւն պիտի կազմեն խորհրդարանին մէջ, ապա միլիոնատէր գործարար Սամուէլ Կարապետեանի առաջնորդած ուժը համոզուած է՝ Յունիս 7-էն յետոյ Փաշինեանը այլեւս վարչապետ պիտի չըլլայ: «Նոր հարցախոյզերի համաձայն Նիկոլ Փաշինեանը Յունիսի 7-ից յետոյ չի լինելու երկրի վարչապետը»:

Նիկոլ Փաշինեանի՝ սահմանադրական մեծամասնութիւն վերցնելու լաւատեսութեան միլիոնատէր գործարար Սամուէլ Կարապետեանի «Ուժեղ Հայաստանը» կը պատասխանէ նոր հարցախոյզերով, որոնց համաձայն՝ տնային կալանքի մէջ գտնուող գործարարին վարկանիշը՝ «Թուիչ-քաճեւէ կ'աճի»:

Կուսակցութեան պատուիրած հարցախոյզերուն համաձայն՝ եթէ Սամուէլ Կարապետեանի օգտին պատրաստ է քուէարկելու 35, ապա Փաշինեանի օգտին աւելի քիչ՝ 34 տոկոսը:

Ինչ կը վերաբերի սահմանադրական մեծամասնութիւն վերցնելու

Փաշինեանի պնդման, ապա «Ուժեղ Հայաստանի» առանցքային անդամներէն Գոհար Մելոյեան կը յիշեցնէ ոչ միայն իրենց պատուիրած ընկերային հարցախոյզերը, այլեւ իշխանականներու կողմից շրջանառուած IR1-ի վերջին հարցումները, որոնց համաձայն՝ Փաշինեանի «Քաղաքացիական Պայմանագիր»-ը 24 տոկոս ձայն ունի:

«Անգամ իրենց շրջանառած ընկերային հարցախոյզերի տուեալներով իրենք չունեն հնարաւորութիւն սահմանադրական մեծամասնութիւն ձեռք բերելու: Բոլոր տուեալներով այս քաղաքական ուժը չունի հանրային մեծաքանակ աջակցութիւն, - նշեց Մելոյեան:

Սամուէլ Կարապետեանի առաջնորդած ուժի ներկայացուցիչը կը պնդէ, որ Փաշինեանի կառավարութիւնը չէ կատարած իր իսկ տրուած խոստումները:

Իշխանութիւնը մինչդեռ կը հակադարձէ՝ կատարած է իր տուած գլխաւոր խոստումը, այն է՝ խաղաղութիւն բերած է, իսկ վերընտրութեան պարագային անշրջելի պիտի դարձնէ այդ խաղաղութիւնը:


Ռուպերթ Քոչարեան Պիտի Գլխաւոր «Հայաստան» Դաշինքը 2026-ի Խորհրդարանական Ընտրութիւններուն

Ռուպերթ Քոչարեան 2026-ի խորհրդարանական ընտրութիւններուն «Հայաստան» դաշինքի թեկնածուն պիտի ըլլայ ՀՀ երկրորդ նախագահ Ռուպերթ Քոչարեանը: Մարտ 16-ին «Հայաստան» դաշինքը ներկայացուց իր նախընտրական ձեռագիրը եւ վարչապետի թեկնածուն:

Հայաստանի երկրորդ նախագահ Ռուպերթ Քոչարեանը եւ ՀՅԴ-ն որոշած են շարունակել իրենց համագործակցութիւնը, որոնց միացած է նաեւ «Առաջ» կուսակցութիւնը, որուն ղեկավարը Սեւակ Խաչատրեանն է: Անոնք յառաջիկայ ընտրութիւններուն պիտի մասնակցին «Հայաստան» դաշինքով:

«Ես պայքարի մէջ եմ մտել նրանց իշխանութեան գալու առաջին իսկ օրերից եւ չեմ հանգստանալու այնքան ժամանակ, մինչեւ նրանք չհեռացուեն», - յայտնեց Ռուպերթ Քոչարեան՝ նշելով, որ ասով կը տարբերի միւս թեկնածուներէն:

Դաշինքին հիմնական նպատակը



Ռուպերթ Քոչարեան

տակը իշխանութեան վերարտադրութեան կանխումն է. ընդդիմադիր դաշտին մէջ այլ թիրախներ չկան:

«Սա հերթական մրցապայքարը չէ, սա գոյաբանական հարց է: Մեր նպատակն է կտրել գիշումները այս շղթան», - յայտնեց ՀՅԴ Գերագոյն մարմնի ներկայացուցիչ, Ազգային ժողովի պատմաւոր իշխան Սողոմոն Կարամանյանը:

«ՀԱԿ»-ը Պատրաստ Է Գործակցելու՝ «Ուժեղ Հայաստան»-ի Զետ. Լեւոն Զուրաբեան

Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած «Հայ Ազգային Գոնկրէսը» (ՀԱԿ) պատրաստ է սկսելու համախմբման գործընթաց «Ուժեղ Հայաստան» կուսակցութեան եւ այլ ժողովրդավարական ու բանական ուժերու հետ: Այս մասին յայտնած է ՀԱԿ վարչապետի թեկնածու Լեւոն Զուրաբեանը՝ Մարտ 14-ին ՀԱԳ 5-րդ համագումարին ներկայացնելով երկրի զարգացման առաջնահերթութիւնները:

«Ուստի յայտարարում ենք, որ պատրաստ ենք այդ նպատակով սկսել նաեւ համախմբման գործընթաց՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցութեան եւ այլ ուժերի հետ միասին, - նշած է Լեւոն Զուրաբեանը:

Արտաքին քաղաքականութեան ծիրին մէջ Զուրաբեան կարեւորած է հաւասարակշռուած եւ բազմաթիւ ուղղութեամբ մօտեցումը՝ նշելով, որ Հայաստանը պէտք չէ կողմնորոշուի համաշխարհային աշխարհաքաղաքական հակամարտութեան ճամբարներէն որեւէ մէկուն օգտին: Ըստ անոր՝ երկիրը պէտք է դիրքաւորուի որպէս համագործակցութեան կամուրջ՝ զարգացնելով վստահելի յարաբերութիւններ Ռուսաստանի, ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Իրանի, Հնդկաստանի եւ Չինաստանի հետ միաժամանակ:

«Արեւմուտք-արեւելք համաշխարհային աշխարհաքաղաքական հակամարտութեան մէջ Հայաստանը պէտք չէ որեւէ կողմ բռնի, այլապէս մեր երկիրը կը վերածուի գերատնտեսութիւնների միջեւ պայքարի կուռախնձորի եւ կ'ենթարկուի հակառակորդ կողմի կործանարար պատժամիջոցներին, - ըսած է անը:

Տնտեսական զարգացման հիմքին Լեւոն Զուրաբեան դրած է արմատական արհեստագիտական արդիականացման ծրագիրը, որ կոչած է «Հայաստանի արհեստագիտական յեղափոխութիւն»: Ան պնդած է, որ պետութիւնը պէտք է



ՀԱԿ-ի վարչապետի թեկնածու Լեւոն Զուրաբեան

հակառակ ֆինանսական ներդրումներ կատարէ բարձր արհեստագիտութիւններու խորշային հատուածներուն մէջ՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով արհեստական բանականութեան, կենսաբանական արհեստագիտութիւններուն եւ ֆինանսական արհեստագիտութեան:

«Պետականօրէն խրախուսուող արհեստագիտական առաջընթացը պէտք է դառնայ երկրի տնտեսական զարգացման, պաշտպանունակութեան եւ բանակի ամրապնդման, գիտութեան, կրթութեան, առողջապահութեան, ճարտարապետութեան եւ մշակույթի տեղաշարժը, - ըսած է անը:

Ներքին քաղաքականութեան եւ պետական կառավարման ոլորտին մէջ վարչապետի թեկնածուն կ'առաջարկէ վերադառնալ 1990-ի կիսանախագահական ձեռագիրին եւ ապահովել արդարադատութեան լիակատար անկախութիւն գործադիր իշխանութենէն: Զուրաբեան խոստացած է դադարեցնել բոլոր քաղաքական հակամարտութիւնները, այդ շարքին՝ հոգեւորականներու նկատմամբ, եւ ազատ արձակել քաղաքական բանտարկեալները:

ԼՈՒՐԵՐ

Նոր Սահմանադրութեան Նախագիծի Բնագիրը Արդէն Պատրաստ Է. Սրբուհի Գալեան



ՀՀ արդարադատութեան նախարար Սրբուհի Գալեանը՝ Արդարադատութեան նախարարին կից հասարակական խորհուրդի առաջին նիստի ընթացքին

Հայաստանի նոր Սահմանադրութեան նախագիծի բնագիրը արդէն պատրաստ է: Այն կը նախատեսուի քննարկել իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան վարչութեան նիստին, ինչպէս նաեւ խորհրդարանական համաձայնութեան մէջ:

Այս մասին յայտնած է ՀՀ արդարադատութեան նախարար Սրբուհի Գալեանը՝ Արդարադատութեան նախարարին կից հասարակական խորհուրդի առաջին նիստի ընթացքին:

«Սահմանադրական բարեփոխումները խորհուրդը շատ աշխույժ է աշխատում: Ամէն շաբաթ նիստեր ենք հրաւիրում, եւ բնագիրն արդէն պատրաստ է՝ ինչպէս խոստացել էի: Սակայն հրապարակման վերաբերելով դեռեւս նորութիւն չկայ, քանի որ որոշուել է այն նախ քննարկել «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան վարչութիւնում եւ խորհրդարանական խմբակցութիւնում: Դրանից յետոյ կ'ընդունուի որոշում բնագրի հրապարակման վերաբերելու,- նշած է նախարարը:

Գալեան նաեւ յստակացուցած է, որ նոր Սահմանադրութեան նախագիծի հայեցակարգային դրոյթները մշակուած էին աւելի վաղ, իսկ ներկայիս բնագիրը կազմուած է այդ դրոյթներու հիման վրայ:

Անոր խօսքով՝ մօտեցումը այն

է, որ Սահմանադրութեան կեդրոնը ըլլայ մարդը՝ քաղաքացին եւ ժողովուրդը, իսկ գործող կառավարման համակարգէն շեղում չի նախատեսուիր:

«Կարծում ենք, որ ժողովրդավարութեան սկզբունքների լաւագոյն արտայայտութիւնը խորհրդարանական համակարգն է: Միաժամանակ իրականացրել ենք բաւականին մեծ փոփոխութիւններ՝ փորձելով աւելի ապակեդրոնացնել իշխանութեան թեւերը եւ ապահովել դրանց միջեւ աւելի լաւ հաւասարակշռութիւն: Օրինակ՝ Ազգային ժողովին տրամադրուած են վերահսկողական լրացուցիչ մեխանիզմներ վարչապետի գործունէութեան նկատմամբ,- նշած է Գալեան:

Դատական իշխանութեան մասով կը նախատեսուի ներդնել երդուեալ ատենակալներու հիմնարկի հնարաւորութիւն: Կը նախատեսուի նաեւ որպէս սկզբունք սահմանել գործերու երկաստիճան բողոքարկման հնարաւորութիւնը, գործերու գրաւոր քննութեան տարբերակը, ինչպէս նաեւ Բարձրագոյն դատական խորհուրդի որոշումներու բողոքարկման հնարաւորութիւն, ինչը ներկայիս կը բացակայի:

Աւելի վաղ, Սրբուհի Գալեան յայտնած էր, որ նոր Սահմանադրութեան նախագիծի բնագիրը կը հրապարակուի 2026 թուականի Մարտին

Մերձաւոր Արեւելքի Սեջ Հակամարտութիւնը Կրնայ Ազդել Գնաճին Վրայ. ԿԴ Նախագահ

Մերձաւոր Արեւելքի մէջ հակամարտութեան սրումը կրնայ Հայաստանի մէջ գնաճին վրայ 1,2-1,7 տոկոս ազդեցութիւն ունենալ: Այս մասին յայտնած է Կեդրոնական դրամատան նախագահ Մարտին Գալստեան

Ըստ գնահատականներուն՝ վտանգները պայմանաւորուած են քարիւղի գինի բարձրացմամբ, այլընտրանքային ուղիներու ծախսերով եւ իրանէն ներմուծուող պարէնի հնարաւոր փոխարինմամբ:

«Դուք տեսնում էք ենթաբաժադրիչները՝ դա քարիւղի գնի աւելացումն է, ներմուծման այլընտրանքային ճանապարհների օգտագործման արդիւնքում գնի որոշակի աճը եւ իրանից ներմուծուող պարէնային ապրանքների որոշակի փոխարինումը: Սա վտանգների տի-



Հայաստանի Կեդրոնական Դրամատան նախագահ Մարտին Գալստեան

րոյթում է, այսինքն մենք չենք ասում, որ սա տեղի է ունենալու,

Հայաստանը TRIPP Նախագիծի Իրագործումը Չգծելու Ոչ Միայն Ստադրութիւն, Այլեւ Պատճառ Չունի. Փաշինեան



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Եւրոխորհրդարանի ամպիոնին

Հայաստանի Հանրապետութիւնը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները յառաջիկային պիտի ստորագրեն համապատասխան համաձայնագիր եւ պիտի սկսին «Թրամփի ուղի յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» (TRIPP) ծրագրի գործնական քայլերը: Այս մասին յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ Եւրոպական խորհրդարանին մէջ ելոյթին ժամանակ:

Վարչապետը յայտնած է, որ ծրագրի իրականացման շրջանակը արդէն ընդունուած է Յունուար 13-ին:

Վարչապետը Եւրոխորհրդարանի ամպիոնէն մանրամասնած է վերջին երկու տարուայ տարածաշրջանային փոփոխութիւնները՝ առանձնացնելով 2025-ի Օգոստոս 8-ին Ուաշինկթընի մէջ Ատրպէյճանի հետ նախաստորագրուած խաղաղութեան հռչակագիրը: Ըստ Փաշինեանի՝ TRIPP նախագիծը, որ կը բխի Հայաստանի «Խաղաղութեան Խաչմերուկէ հայեցակարգէն, ներկայիս կը գտնուի «բերեղացման փուլին»:

Նիկոլ Փաշինեան իր խօսքին մէջ մէջբերած է Ուաշինկթընի հռչակագրի այն դրոյթները, որոնք կը սահմանեն հաղորդակցութիւններու ապաշրջափակման սկզբունքները:

«Մենք վերահաստատեցինք ներպետական եւ երկկողմ եւ միջազգային փոխադրուածների համար երկու երկրների միջեւ հաղորդակցութիւնների բացման կարելուութիւնը, հիմնուած պետութիւնների ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ իրաւագործութեան յարգման վրայ, տարածաշրջանում ու նրա հարեւանութեամբ խաղաղութիւնը, կայունութիւնն ու բարգաւաճումը խթանելու նպատակով: Այս ջանքերը կը ներառեն Ատրպէյճանի Հան-

րապետութեան հիմնական մասի եւ Նախիջևանի ինքնավար Հանրապետութեան միջեւ Հայաստանի Հանրապետութեան տարածքով անխոչընդոտ հաղորդակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան համար միջազգային ու ներպետական հաղորդակցութեան փոխադարձ առաւելութիւններով,- յայտնած է Փաշինեան:

Վարչապետը պաշտօնապէս յայտարարած է, որ Հայաստանը TRIPP նախագիծի իրագործումը ձգձգելու «ոչ միայն մտադրութիւն, այլեւ պատճառ չունի»: Ան ընդգծած է, որ նախագիծը լիարժէք կը համապատասխանէ Հայաստանի շահերուն եւ չի նսեմացներ երկրին ինքնիշխանութիւնը:

Խօսելով ընթացիկ իրավիճակին մասին՝ Փաշինեան նշած է, որ 2025-ը դարձած է անկախութենէն ի վեր առաջին տարին, երբ սահմանին գոհեր կամ վերաւորներ չեն արձանագրուած: Ան նաեւ տեղեկացուցած է տնտեսական փոխգործակցութեան առաջին արդիւնքներուն մասին:

«Յոյս ունեմ առաջիկայում Հայաստանի համար արտահանման հասցէ կը դառնայ նաեւ Ատրպէյճանը, իսկ Հայաստանը Ատրպէյճանից արդէն ներկրում է նաւթամթերք, ինչը մեր շուկայում նաւթամթերքի գների նուազման առիթ դարձաւ եւ կտրեց նաւթամթերքի շուկայում տասնամեակներով հաստատուած մենաշնորհները,- ըսած է ան:

Վարչապետը վերահաստատած է Հայաստանի պատրաստակամութիւնը՝ այսօր գործող ենթակառուցուածքներով (Կոռնիձոր-Գորիս-Եղեգնաձոր-Երասխ երթուղիով) ապահովել Ատրպէյճանի արեւմտեան շրջաններու եւ Նախիջևանի միջեւ կապը, քանի դեռ TRIPP ծրագրի շինարարական աշխատանքները չեն սկսած:

բայց տեղի ունենալու պարագայում գնաճի վրայ ազդեցութիւնը կը լինի 1,2-ից 1,7%»,- ըսած է Գալստեան:

Տարածաշրջանային լարուածութիւնը կ'աւելցնէ համաշխարհային վտանգները՝ միաժամանակ դանդաղեցնելով տնտեսական աճը եւ խթանելով գնաճային հաւանականութիւնը: Գալստեանի փոխանցմամբ՝ համաշխարհային տնտեսական աշխուժութեան անկումը անդառնալի ազդեցութիւն պիտի ունենայ Հայաստանի ներքին տնտե-

սական զարգացումներուն վրայ:

«Հայաստանի համար լրացուցիչ վտանգներ կը դիտարկուին արտաքին պահանջարկի նուազումը, գբօսաշրջային հոգեբանական գործօնները եւ Միջին Արեւելքի շուկաներուն մէջ իրացման հնարաւորութիւններու սահմանափակումը: Մասնաւորապէս, Արաբական Միացեալ Էմիրութիւններու՝ որպէս առեւտրային կեդրոնի դերի տկարացումը կրնայ յանգեցնել արտահանման եւ ներմուծման լոկալիստիկ խնդիրներու:

Նախագահ Խաչատուրեան Վլատիմիր Վարդանեանի ԹեկնածուիՆը Առաջադրած է ՍԴ Դատաւորի Պաշտօնին

Հայաստանի նախագահը Սահմանադրական դատարանի դատաւորի պաշտօնին ընտրելու համար առաջադրած է Վլատիմիր Վարդանեանի թեկնածու թիւերը:

Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան Վլատիմիր Վարդանեանը Ազգային ժողովի պետաիրաւական հարցերու յանձնաժողովի նախագահն է:

Աւելի վաղ հաղորդուած էր, որ Հրաչյր Թովմասեանն այլեւս ՍԴ դատաւոր չէ. ուժի մէջ մտած է անոր դատաւորութիւնը: Վճռաբեկ դատարանը վարոյթ չէ ընդունած փաստաբաններու բողոքը Թովմասեանը մեղաւոր ճանչնալու դատաւորութիւնին դէմ: Սա կը նշանակէ, որ 2024 թուականին կայացուած դատաւորութիւնը կը մտնէ ուժի մէջ: Այդ վճիռով Թովմասեան մեղաւոր ճանչցուած է արդարադատութեան նախարար եղած ժամանակ պաշտօնի լիազօրութիւնները անցնելու համար: Բայց չէ ազատագրուած,



Սահմանադրական դատարանի դատաւորի պաշտօնի թեկնածու՝ Վլատիմիր Վարդանեան

քանի որ անցած է վաղեմութեան ժամկէտը:

Հանրապետութեան նախագահը մէկ ամսուայ ընթացքին պէտք է ՍԴ դատաւորի թեկնածու առաջադրէր:

ՍԴ-ն Սահմանադրական Գանչցաւ ՀԵՑ-ի Պետականացման Առնչուող Օրէնքները

ՀՀ Սահմանադրական դատարանը որոշած է, որ ՀԵՑ-ի վերաբերեալ հրատապ կարգով ընդունուած օրէնքները կը համապատասխանեն Սահմանադրութեան:

«Էներգետիկայի մասին» եւ «Հանրային ծառայութիւնները կարգաւորող մարմնի մասին օրէնքներու սահմանադրականութեան հարցով պատգամաւորներու դիմումը Բարձր դատարան մուտք եղած էր Յուլիս 11-ին:

Ըստ հոլթեան, Սահմանադրական դատարանը որոշած է, որ «Տաշիր կապիտալ» արտօնագրէն զրկելը կը համապատասխանէ ՀՀ Սահմանադրութեան:

Այս օրէնքներուն մէջ ընդունու-

ուած փոփոխութիւններով հնարաւոր դարձած էր ՀԵՑ-ի կառավարումը ժամանակաւոր կառավարիչի յանձնել:

Ընդդիմադիր պատգամաւորները Սահմանադրական դատարանին միջնորդած էին կասեցնել օրէնքի գործողութիւնը, մինչեւ Բարձր դատարանը գործով վերջնական որոշում կայացնէ: Նման որոշում նաեւ միջազգային իրաւարար ատեանը կայացուցած էր, որ, սակայն, կառավարութիւնը կը մերժէր կատարել:

ՀԵՑ-ի պետականացման գործընթացը սկսաւ անոր սեփականատէր Սամուէլ Կարապետեանի կալանաւորումը յետոյ:

Հակափտածութեան Կոմիտէի Նիստին Քննարկուած Են Յառաջիկայ Համապետական Ընտրութիւններու Ընթացքին Կոմիտէի Գործառնայններն Ու Առկայ Մարտահրաւերները

Հայաստանի Ազգային ժողովի՝ 2026 թուականի Յունիս 7-ին կայանալիք ընտրութիւններուն ընդառաջ ՀՀ Հակափտածութեան Կոմիտէի նախագահին գլխաւորութեամբ տեղի ունեցած է նիստ, որուն ընթացքին քննարկուած են յառաջիկայ համապետական ընտրութիւններու ընթացքին կոմիտէին գործառնայններն ու առկայ մարտահրաւերները:

Նիստի օրակարգին վրայ ընդգրկուած առանցքային հարցերը ներառած են՝ ընտրական գործընթացներու մշտադիտարկման շտաբի ձեւաւորումը, հիպոթետիկ սպառնալիքներուն դիմակայելու կոմիտէի գործառնայններու սահմանումը, նախաքննական եւ գործնական ստորաբաժանումներու փոխլրացնող գործունէութեան համակարգումը եւ յառաջիկայ ընտրութիւններու ծրագրումը, ընտրական յանցագործութիւններու յայտնաբերման, բացայայտման եւ քննութեան ոլորտին մէջ ծառայողներու մասնագիտական պատրաստութեան բարձրացումը:

Կոմիտէի նախագահին ներկայացուած է աշխատանքներուն ընթացիկ վիճակը, գոյքագրուած են առկայ խնդիրներն ու յառաջիկայ ընտրութիւնները: Քննարկումներու բերումով, նախագահին կողմէ տրուած են յատկապէս յանձնարարականներ՝ ընտրական գործընթացներու մշտադիտարկման շտաբի ձեւաւորման ժամկէտներու, կազմի եւ աշխատակարգի սահմանման, ինչպէս նաեւ հիպոթետիկ սպառնալիքներուն դիմակայելու գործիքակազմի եւ ներգրաւուելիք միջոցներու յատկացման վերաբերեալ: Միաժամանակ յանձնարարականներ տրուած են նախաքննական եւ գործնական ստորաբաժանումների աշխատանքի համակարգումը ծրագրման ուղղութեամբ:

Նիստի ընթացքին կարեւորուած է կոմիտէին գործուն դերը ընտրական գործընթացներու թափանցիկութիւնն ու օրինականութիւնը ապահովելու, ինչպէս նաեւ գործողութիւններու արդիւնաւէտ համակարգումը՝ առկայ վտանգներուն արագ եւ հետեւողական արձագանգ ապահովելու նպատակով:

ԵՄ Յանձնակատարը Դրական Կը Գնահատէ Հայաստանի Արդիւնքները ԵՄ Վիզաներու Ազատականացման Գործընթացին Մէջ



ԵՄ Գործընթացի Գործերու եւ գաղթի հարցերով յանձնակատար Մակնուս Պրուլըր ԴՅ Գործընթացի Գործերու Գախարար Արփիմէ Սարգսեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ

ԵՄ ներքին գործերու եւ գաղթի հարցերով յանձնակատար Մակնուս Պրուլըրը դրական կը գնահատէ Հայաստանի արձանագրած արդիւնքները ԵՄ-ի հետ վիզաներու ազատականացման երկխօսութեան գործընթացին մէջ:

Մակնուս Պրուլըրը այս մասին յայտնեց ՀՀ ներքին գործերու նախարար Արփիմէ Սարգսեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ:

«Ես այսօր հանդիպումներ ունեցայ Հայաստանի ներքին գործերու նախարարին եւ փոխվարչապետին հետ՝ քննարկելով հրաշալի յառաջընթացը, որ Հայաստանը արձանագրած է վիզաներու ազատականացման գործընթացի ուղղութեամբ: Այդ շատ կարեւոր է. 2024 թուականին ի վեր, ինչ մեկնարկած է երկխօսութիւնը, յառաջընթացը շատ կայուն է, իսկ ԵՄ-ն 2025 թուականի Նոյեմբերին արդէն Հայաստանին փոխանցած է վիզաներու ազատականացման գոր-

ծողութիւններու ծրագիրը: Ծատ կարեւոր յառաջընթաց կատարուած է փաստաթուղթերու պաշտպանութեան, գաղթի կառավարման, կենսաչափական նոյնականացման անձնագրերու եւ նոյնականացման քարտերու հետ կապուած, որոնք Հայաստանի քաղաքացիները շուտով կրնան ստանալ,- ըսաւ ԵՄ ներքին գործերի եւ գաղթի հարցերով յանձնակատարը՝ յաւելելով, որ իր այցին նպատակներէն է նաեւ խրախուսել Հայաստանի կողմէ այս բարեփոխումներու շարունակականութիւնը:

Պրուլըրի տեղեկատուութեամբ՝ գործընթացի յաջող փուլը պիտի ըլլայ վիզաներու ազատականացման երկխօսութեան գործողութիւններու ծրագրի իրականացման յառաջընթացի վերաբերեալ զեկոյցը, որ կը նախատեսուի տրամադրել ընթացիկ տարուայ Մայիսին՝ ԵՄ-Հայաստան գաղթաթափուցի ծիրին մէջ:

Պիտի Ուժեղացուի Սահմանով Տեղափոխուող Կանխիկ Դրամական Միջոցներու Վերահսկողութիւնը. ՊԵԿ

Պիտի ուժեղացուի սահմանով տեղափոխուող կանխիկ դրամական միջոցներու նկատմամբ վերահսկողութիւնը՝ ֆինանսական թափանցիկութեան ապահովման եւ հնարաւոր իրաւախախտումներու կանխարգիւման նպատակով:

Պետական Եկամուտներու Կոմիտէին յայտնած են, որ Յունուար-Փետրուար ամիսներուն ֆիզիքական անձերու կողմէ իրականացուած կանխիկ դրամական միջոցներու ներմուծման եւ արտահանման աւելի քան 450 դէպք արձանագրուած կամ յայտարարագրուած է՝ շուրջ 69 միլիոն տոլարին համարժէք գումարի չափով: Անոնցմէ շուրջ 59,5 միլիոն տոլարի չափով կանխիկ դրամական միջոցները ներմուծուած են Հայաստանի Հանրապետութիւն, իսկ շուրջ 9,5 միլիոն տոլարի չափով՝ արտահանուած է երկրէն:

Վերլուծութիւնները ցոյց կու տան, որ կանխիկ դրամական միջոցներու զգալի մասը տեղափոխուած է Եւրասիական Տնտեսական Միութեան անդամ պետութիւններէ:

Պետական Եկամուտներու Կոմիտէին կը յիշեցնէ, որ 10.000 տոլարը կամ անոր համարժէք գումարը գերազանցող եւ սահմանով տեղափոխուող կանխիկ դրամական մի-

ջոցները ենթակայ են յայտարարագրման:

Չնայած այն հանգամանքին, որ Եւրասիական Տնտեսական Միութեան շրջանակին մէջ կանխիկ դրամական միջոցներու ներմուծման եւ արտահանման մասով առանձին կարգաւորումներ սահմանուած չեն, այնուամենայնիւ, կանխիկ դրամական միջոցներու մեծածաւալ տեղափոխումը կը պարունակէ որոշակի վտանգներ, այդ շարքին՝ ստուերային շրջանառութեան, փողերու լուսացման, ապօրինի ֆինանսական հոսքերու կամ այլ իրաւախախտումներու հնարաւորութեան հետ կապուած վտանգներ:

ՊԵԿ-ը քաղաքացիներուն կը յորդորէ՝ խուսափել խոշոր չափերու կանխիկ դրամական միջոցներու ֆիզիքական տեղափոխումէն եւ հնարաւորութեան պարագային օգտուել դրամատնային փոխանցումներէ, որոնք աւելի անվտանգ եւ թափանցիկ միջոցներ են՝ ֆինանսական գործարքներու իրականացման համար:

Անկախ տեղափոխման ուղղութեան՝ Կոմիտէն պիտի շարունակէ հետեւողականօրէն իրականացնել կանխիկ դրամական միջոցներու շրջանառութեան նկատմամբ վերահսկողութիւնը:

Չենք թողնել Որ Հայաստանը Միայնակ Դիմակայել

Շարունակուած էջ 1-էն

Ան նաեւ ընդգծած է, որ ճնշման տակ գտնուող ժողովրդավարութիւնները կրնան յոյսը դնել Եւրոպայի վրայ:

«Ազատութեան» տրամադրութեան տակ յայտնուած փաստաթուղթին մէջ կը նշուի, որ առաքելութիւնը Հայաստանի մէջ 10-15 օր պիտի անցնէ: Խումբը պիտի օգնէ, որ Հայաստանի վարչապետի աշխատակազմը եւ Անվտանգութեան խորհուրդի գրասենեակը «Կիբեռյարձակումներու եւ օտարերկրեայ տեղեկատուական խաբէութիւններու իրավիճակներուն մէջ այդ ճգնաժամերը կառավարելու ծրագիր եւ կարգաւորումներ մշակեն»: Օժանդակութեան շահառուները նաեւ կեդրոնական ընտրական յանձնաժողովը, Ներքին գործերու նախարարութիւնը, հարկային մարմինները պիտի ըլլան: Եւրոմիութեան մէջ կը համարեն, որ Հայաստանը բախած է բուռն-հիպոթետիկ գործողութիւններու,

որոնց նպատակն է «խաթարել ժողովրդավարական հիմնարկները եւ հասարակութեան վստահութիւնը»: Այս գործողութիւններուն մէջ թուարկած են օտարերկրեայ տեղեկատուական խաբէութիւնները եւ միջամտութիւնը, կիբեռսպառնալիքներն ու ընտրական գործընթացներու ապօրինի ֆինանսաւորումը:

«Խիստ հաւանական է, որ այդ սպառնալիքները կը սրին 2026 թուականի Յունիս 7-ին կայանալիք ընտրութիւններու նախաշեմին», - կը նշուի Եւրոպայի Խորհուրդի հաւանութեան արժանացած փաստաթուղթին մէջ:

Փաստաթուղթէն պարզ կը դառնայ, որ Հայաստանը Եւրոմիութեան դիմած է անցեալ Նոյեմբերին, Յունուարին Եւրոմիութեան գնահատման խումբ ժամանած է Հայաստան, եւ այդ այցը «պատկերաւոր պատկերացումներ տուած է հիպոթետիկ սպառնալիքներու նկատմամբ երկրին խոցելիութեան վերաբերեալ»:

Օտարերկրեայ Տեղեկատուական Միջամտութիւններն

Շարունակուած էջ 2-էն

կարող է չհասնել 2021-ի խորհրդարանական արտահերթ ընտրութիւնների ժամանակ նկատուած մասշտաբներին:

Արձանագրելով արտաքին դերակատարների կողմից ընտրութիւնների ամբողջականութեանը սպառնացող իրական վտանգը՝ կարեւոր է նշել, որ FIMI-ն, այնուամենայնիւ, միակ մարտահրաւէրը չէ, որին Հայաստանը բախուած է ընտրութիւններից առաջ: Քաղաքացիական հասարակութեան, լրատուական դաշտի, միջազգային գործընկերների եւ դոնորների աճող կեդրոնացումն այս հարցի վրայ ռիսկ է ստեղծում՝ անտեսելու այլ, նոյնքան կարեւոր խնդիրներ:

Այնպիսի տպաւորութիւն է ստեղծուում, որ ներհայաստանեան եւ միջազգային բազմաթիւ դերակատարներ այժմ աւելի կեդրոնացած են հնարաւոր օտարերկրեայ միջամտութեան թեմայի, քան երկրի ներսում իրաւունքի գերակայութեան եւ ժողովրդավարական նորմերի ակնյայտ խախտումների վրայ: Ընտրութիւնների արդիւնաւէտ կազմակերպման հետ կապուած ալ խնդիրներն են, ինչպիսիք են նախընտրական արշաւների ապօրինի ֆինանսաւորումը եւ վարչական ռեսուրսի չարաշահումը, կարող են անտեսուել այս կեդրոնացման պատճառով:

Մէկ այլ միտում, որն ի յայտ է եկել հայաստանեան համատեքստին քիչ ծանօթ միջազգային դերակատարների շրջանում, Հայաստանի եւ Մոլդովայի միջեւ պարզունակ գուգահեռներ անցկացնելու հակումն է: Թէեւ Մոլդովայի վերջին ընտրական գործընթացներում կիրառուած որոշ մեթոդներ տեսանելի են նաեւ Հայաստանում, համեմատութիւնը յաճախ գուրկ է կարեւոր նրբերանգներից:

Հայաստանը եւ Մոլդովան հասարակական նախապատուութիւններով, Ռուսաստանի հետ տնտեսական եւ առեւտրային յարաբերութիւններով, Մոսկուայի ունե-

ցած լծակների մակարդակով եւ աշխարհաքաղաքական ու աշխարհագրական միջավայրով: Այս տարբերութիւնները հական են: Պարզեցուած համեմատութիւնները կարող են յանգեցնել սխալ եզրակացութիւնների եւ քաղաքական սխալ արձագանքների:

Վերջապէս, չափազանց մեծ կեդրոնացումը FIMI-ի վրայ ռիսկ է ստեղծում երկրորդ պլան մղելու մէկ այլ կարեւոր իրականութիւն. ընտրական փուլում շրջանառուող ապատեղեկատուութեան եւ մանիպուլիացիաների մեծ մասը, ամենայն հաւանականութեամբ, բխելու է ներքին դերակատարներից: Հայաստանի ներսում քաղաքական ուժերը վաղուց են օգտագործում ապատեղեկատուութիւնը, դաւադրապաշտական թեզերը եւ բեւեռացնող հետադարձութիւնը որպէս քաղաքական պայքարի գործիքներ: Այս հարթութիւնը անտեսելը խնդրի մեծ մասը կը թողնի չլուծուած:

Օտարերկրեայ տեղեկատուական մանիպուլիացիաներին դիմակայելը միանշանակ կարեւոր է, եւ Հայաստանը պէտք է շարունակի ամրապնդել իր դիմակայունութիւնը նման սպառնալիքների դէմ: Սակայն այս ջանքերը չպէտք է ստուերեն երկրի ժողովրդավարական գործընթացի առջեւ ծառայած այլ կառուցուածքային մարտահրաւէրները: Ազատ եւ արդար ընտրութիւնների ապահովումը պահանջում է համապարփակ մօտեցում, որը հասցնագրում է թէ՛ արտաքին, թէ՛ ներքին ռիսկերը: Այս առաջնահերթութիւնների միջեւ ճիշտ հաւասարակշռութիւն գտնելը վճռորոշ կը լինի, եթէ Հայաստանը ցանկանում է պաշտպանել ոչ միայն գալիք ընտրութիւնների ամբողջականութիւնը, այլեւ իր ժողովրդավարութեան երկարաժամկէտ կայունութիւնը:

***Democracy Watch-ը Սիվիլնիսթի եւ ժողովրդավարութեան եւ Անվտանգութեան տարածաշրջանային կեդրոնի համատեղ նախաձեռնութիւնն է:**

Քոչարեան Իզուր Իշխանութեան Վերադարձի Յոյսեր Կը Փայփայէ

Շարունակուած էջ 1-էն

Ելեքտրական ու գիտահետազոտական ոլորտի հիմնարկներ: Այդ բոլոր տեղի ունեցան խորհրդային ժամանակներէն մնացած 95 միլիոն տոլար պարտքի դիմաց, հակառակ որ անոնց իսկական արժէքը կը գնահատուէր մի քանի անգամ աւելի բարձր:

Քոչարեանի օրօք փակուեցան «Ա1» եւ «Նոյեան Տապան» հեռատեսիլի ալիքները, որոնք «ինքընդեմ» առաջ կը նկատուէին երկրի միակ անկախ լրատուամիջոցները: Մամուլն ու անձնական ազատութիւնները ենթարկուեցան սահմանափակումներու ու երկրէն ներս հաստատուեցաւ վախի մթնոլորտ:

Քոչարեան ամէն առիթով կը յիտրտայ, թէ ինք եղած է յաղթած երկրի մախազահ հակառականոր, որ Արցախեան առաջին պատերազմի յաղթանակը կերտուած էր իր ժամանակէն առաջ: Անոր պաշտօնավարման տարիներուն է որ, սկսաւ Ատրայեյճանի ռազմական ծախսերու կտրուկ բարձրացումը եւ ապա ուժերու հաւասակշռութեան խախտումը, որ աւելի խորացաւ Սերժ Սարգսեանի մախազահութեան տարիներուն: Եթէ Քոչարեանն ու Սարգսեանը փորձէին նուազագոյն չափով բանակի ու սպառազինութեան վրայ ուշադրութիւն դարձնել, այսօր Արցախի ճակատագիրը կրնար տարբեր ըլլալ:

Հնչակեան Թեկնածուները Յաղթած են

Շարունակուած էջ 1-էն

տեղական նախաձեռնութիւններով եւ քարոզարշաւի ընթացքին մշտական աջակցութեամբ վճռականօրէն նպաստեցին այս յաղթանակին:

«Հաւատարիմ մնալով իր ժառանգութեանն ու ժողովրդավարութեան, Սոցիալական Արդարութեան, Եղբայրութեան եւ Յա-

Այս բոլորը տակաւին թարմ են ժողովուրդի յիշողութեան մէջ ու Քոչարեան կը մնայ մերժուած կերպար մը, որ կը շարունակէ գործել քաղաքական թատերաբեմին վրայ շնորհիւ իր ունեցած նիւթական միջոցներուն ու լրատուական լայն ցանցին:

Յետեւաբար, զարմանալի չէ, որ Սիջազգային Հանրապետական Հիմնարկի վերջին հարցախոյզին համաձայն Նիկոլ Փաշինեանի 29 տոկոսէն ու Սամուէլ Կարապետեանի 11 տոկոսէն ետք Քոչարեանի հաւանական ընտրողներու թիւը կը գնահատուի 4 տոկոս, որ բաւարար չէ նոյնիսկ խորհրդարան մուտք գործելու համար: Նախորդ ընտրութիւններուն «Հայաստան» դաշինքի ստացած 21 տոկոս ընտրողներէն շատեր այժմ անցած են Ռուսաստանի միլիտարիզմի Սամուէլ Կարապետեանի կողմը, որուն կենսագրականը նուազ խոցելի է՝ քան Քոչարեանին: Այդ պատճառաւ Փաշինեանէն դժգոհները պիտի նախընտրեն իրենց ծայրը տալ Կարապետեանին, որուն ընտրական յոյերը շատ աւելի մեծ են:

Որքան որ ալ վերադարձի յոյսեր փայփայէ, այսօրուան դրութեամբ Ռուսաստանի ու իր գլխաւորած դաշինքի խորհրդարան մուտքի հաւանականութիւնը օրէ-օր կը նուազի՝ իր տեղը զիջելու համար ընդդիմադիր այլ ուժերու:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
«ՄԱՍԻՍ»

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$75,00 * \$150,00 (first class) for USA

\$ 250,00 (Air Mail) for Canada.

\$ 400,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

ՀԱՆ-ի Կալայի Ընթացքին Ամերիկեան Քաղաքական Դեմքեր Իրենց Զօրակցութիւնը Յայտնեցին Հայութեան Ու Հայաստանին



Շարունակուած էջ 1-էն

էմի մրցանակի թեկնածու էլինա Աբովեանի բացման խօսքէն ետք հնչեցին Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի Հանրապետութեան ազգային հիմները:

Տ. Մանուկ Աւ. Քհնյ, Մարգարեան կարգաց թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.-ի ողջոյնի եւ բարեմաղթութիւններու գրութիւնը ուղղուած ՀԱՆ-ին եւ ներկայ հասարակութեան, որուն յաջորդեց սեղաններու օրհնութիւնը:

Երեկոյցին ներկայ էին ու ելոյթներ ունեցան ԱՄՆ Ներկայացուցիչներու Տան անդամներ՝ ճիւտի Չու եւ Լորա Ֆրիտմըն, Քալիֆորնիոյ Նահանգային ծերակոյտի անդամ Սաշա Ռընէ Փրեք, Քալիֆորնիոյ Նահանգային Նիրհրհարանի անդամ Նիք Շուլթս եւ Կլէնտէյլի Քաղաքապե-

Նոր սերունդը կը հաղորդակցի պատկերներու եւ թուային գործիքներու միջոցով: Լեզուի ներկայութիւնը համացանցի եւ բջիջայիններու վրայ այլեւս ընտրութիւնն է, այլ՝ պարտադրանք: Դասագիրքերու կողքին, կարելի է որդեգրել փոխկապակցական (փոխազդեցիկ) (interactive) յաւելումներ (ինչպէս՝ Gus on the Go) եւ խաղեր, որոնք ուսումը կը վերածեն հաճելի փորձառութեան: Դասագիրքերը օժտուած ըլլան QR քոտերով, որոնք աշակերտը կը տանին դէպի տեսերիզներ կամ ձայնային նիւթեր: Լեզուն գետեղել «Ինսթակրամ»-ի կամ «Թիքթոք»-ի տիրոջին մէջ, պատրաստել հայկական նիւթեր եւ քաջալերել հայերէնի գործածութիւնը առցանց զրոյցներու (chats) ու նոյնիսկ վիտէօ-խաղերու (video games) ընթացքին:

2.- Լեզուի կենսունակութիւնը առօրեայ կեանքին մէջ

Ընկերալեզուաբանները կը շեշտեն, որ լեզուն սորվելու լաւագոյն ձեւը ոչ թէ զայն սորվիլն է, այլ այդ լեզուով ապրիլը: Որպէսզի լեզուն չըլլայ միայն «պարտականութիւն», անկապ պէտք է առնչուի երիտասարդի իրական հետաքրքրութիւններուն: Դասարանային քննարկումները կրնան ներառել այնպիսի նիւթեր, որոնք իրենց սրտին մօտ են՝ մարմնակրթութիւն, երաժշտութիւն, արհեստական բանականութիւն (ԱԲ), խաղային աշխարհ, ընկերային ցանցերու բարոյագիտութիւն, սփիւռքեան ինքնութիւն, հոգեկան առողջութիւն, միջավայրի պահպանութիւն, Շեշտը պէտք է շեղի անթերի քերականութենէն եւ սխալներ ուղղելու լարուածութենէն դէպի գործնական հաղորդակցութիւն: Անհատները պէտք է քաջալերուին գործածելու լեզուն բնական երկխօսութիւններու մէջ՝ իբրեւ ինքզինք արտայայտելու միջոց: Աւանդական շարագրութիւններու կողքին, յանձնարարել «Թիքթոք»-ի վիտէօներ, փոքրասթներ կամ Meme-եր:

3.- Մանկավարժական նոր ռազմավարութիւններ

Արդի մանկավարժութիւնը կը յուշէ հրաժարիլ «վերէն վար» դասաւանդման ոճէն: Ուսուցիչը այլեւս միայն տեղեկութիւն փոխանցող չէ, այլ՝ լեզուական միջավայր ստեղծող ու քաջալերող: Աշակերտները պարզ ունկնդիրէ պէտք է վերածուին բովանդակութիւն ստեղծողներու: Անոնք կրնան պատրաստել կարճ ժապաւէններ կամ թուային պարբերաթերթեր՝ կիսելով իրենց սեփական պատմութիւնները: Աշակերտները թող պատրաստեն թուային ամսագիրներ կամ կայքեր՝ իրենց նախասիրութիւններուն շուրջ: Դասարանային «Փակ խումբ» ստեղծելով «Ինսթակրամ»-ի վրայ՝ աշակերտը կրնայ մէկ վայրկեաննոց տեսանիւթով բացատրել հետաքրքրական բառ մը կամ օրուան ընթացքին սթորիք պատմել իր առօրեան հայերէնով: Առաջարկուածը հոս այն է, որ լեզուն պէտք է ըլլայ հաճույքի, կատակի եւ ընկերային գործիք:

4.- Համասփիւռքեան կապ եւ ինքնութիւն

Շուրիշկանի Աւետարանը



Ծնած եմ 1498-ին, օրը չեմ յիշեր

Ասպիսնակ գիւղի մէջ Բարսեղ քահանայի կիսամութ խուցի մէջ ծնայ: 1498 թուականն էր: Գարնանամուտ: Օ՞րը... Չարձանագրեց: Մորթիս վրայ միայն գրեց ՋԽԷ: Մեր գիւղը Արճեշ բերդաքաղաքին վեց ժամ հեռու է: Մեծոփա վանքի մօտ ենք, բարձրագիր վայրի վրայ, ուրկէ գեղեցիկ է դիտել ծովը: Մեծ է Ասպիսնակը. հագիւ ութսուն տուն: Մեր բնակիչները... երկրագործ են անոնք, անասնապահ, ոմանք ալ այգեգործ: Մեր եկեղեցին, Ս. Ստեփանոսը, ուր ես ծնած եմ, կը պատմեն, թէ եօթանասուն տարի առաջ կառուցեր են Բարսեղ քահանայի մեծ հայրերը, գիւղը տէրերը: Քահանան գիս բուրդէ խանձարուրի մը մէջ փաթթեց: Ապա, մոմը մառեց եւ դուրս ելանք: Մարտի ցուրտ օր մըն էր: Դունակը մեծ գնկիւնով մը կղպեց: Հոգեւոր եղբայր մը հեւալով եկաւ, ողջունեց քահանային,

քին մէջ: Բարսեղ քահանան հրաժեշտի համբոյր մը տուաւ ինծի, խոնարհեցաւ իշխանուհիի առջեւ, ապա նստեցաւ իր աւանակին վրայ եւ վերադարձաւ Ասպիսնակ:

Ես, Թուրֆանտա իշխանուհիի պատուէրով եւ Բարսեղ քահանայի գրիչով ծնունդ առած Սուրբ Բարսեղի Աւետարանն եմ:

Ամիս մը ցուցաբերկի մեջ

Մարտ, 2026: Մէկ այլ գարնանամուտ է: Երեւանեան թերթերու, Մաշտոցի պողոտայի վրայ տեղադրուած ցուցանակներու վրայ է անունս.

«ՇՈՒՐԻՇԿԱՆԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ ՄԱՐՏԻ 10 - ԱՊՐԻԼԻ 10»

Հեռատեսիլի վրայ է դէմքս: Արծաթով եւ թանկագին քարերով եմ զարդարուած: Հաղորդավար տիկնայք եւ պարոնայք կը պատմեն արկածաւոր ողբասկանս: Անոնք

Բայց ես չեղայ ապերախտ: Հրաշքներ եւ բժշկութիւն չնորհելով վարձատրեցի բարեպաշտ տէրերուս հոգատարութիւնը: Թէեւ, ըստ

երկնքին համար, ես լոյսի աստղ մը եղայ, ապրելու իմաստ, մխիթարութիւն: Իմ ծնունդի քառասուներորդ օրը իշխանուհին ունեցաւ



աւանդութեան ամէն տարի Զատիկին յաջորդող կիրակի օրը Մատենադարանի ձեռագրապահոցէն դուրս կը բերէին գիս եւ մեծ թափորով Մուղնի գիւղի Սուրբ Գեւորգ եկեղեցին կը տանէին, որպէսզի ես հոն մնայի մինչեւ ուշ երեկոյ, երեւէի ուխտաւորներուն, անոնք երկրպագելով մօտենային ինծի, համբուրէին գիս, իսկ ես անոնց պարգեւէի իմ հրաշագործ օրհնութիւնս: Բայց, այս ցուցադրութիւնը տարբեր էր. «ՇՈՒՐԻՇԿԱՆԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԲԱՅԱՌԻԿ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ»: Անո՞ւնս... Ինչպէ՞ս «Շուրիշկան» դարձաւ: Ան մէկ այլ գրոյց է: Ես նախ պատմեմ մկրտութիւնս:

մէկ այլ այցելու՝ Ասպիսնակ գիւղի Տէր Գրիգորը եւ իր ընտանիքը: Իշխանուհին եւ Տէր Գրիգորը ի գնահատանք գրիչ քահանային գիս անուանեցին Սուրբ Բարսեղի աւետարան: Սկսայ հիւանդներ բժշկել եւ կիներուն զաւակ պարգեւել: Ուխտաւորներ եկան հեռաւոր երկիրներէ իմ երես տեսնելու համար: Անոնք գիս անուանեցին «հրաշագործ», «խնդրակատար», «ուխտակատար»... Տասնմէկ սերունդ խաղաղօրէն մնացի գիւղիս մէջ, արժանանալով բոլորի երկիւղածութեան, մինչեւ այն չար առաւօտը, երբ արթնցանք ասպատակող ձիերու սարսափեցնող դոփիւնով:

Ես լսեցի ձիերու ահաւոր դոփիւնը

Ասպիսնակ գիւղի խաղաղ առաւօտը խանգարուեցաւ: Աքլորը եօթը անգամ կանչեց: Ժամի գանգը

Շար.ը էջ 15



ապա շտապեց դէպի գոլուտ ախոռ, հանեց քահանայի հաւատարիմ անթամբ աւանակը, եւ անոր վրայ դրաւ խուրճին մը: Քահանան գիս իր քով նստեցուց: Արահետները ձիւնով ծածկուած էին: Պղնձեայ ծովը սառած էր: Սիփան լեռը կը նմանէր սպիտակափայլ հարսի: Վեց ժամ տեւեց մեր ճանապարհորդութիւնը: Կանգ առինք առափնեայ բերդակի մը առջեւ, որուն արեւելեան քարերը շիկացած էին ծնող արեւու հետ: Պահակները տէր հօր եւ իր աւանակը հեռուէն ճանչցան: Արքունի դարպասի մէկ թեւը ճռնչալով բացուեցաւ: Ներս մտանք: Աշտանակներով լուսաւորուած գեղաքանդակ դահլիճի պատերը ջերմացած էին ոսկեսիւմ վարագոյրներով, իսկ յատակը՝ նրբահիւս գորգերով: Սեւազգեստ նաժիշտ մը գիս յանձն առաւ եւ տուաւ քաղցրահայեաց տիկնոջ մը: Այդ օր, որպէս հոգեւոր մայր, առաջին անգամ գիս իր թաւշեայ ձեռքերուն մէջ շոյեց Թուրֆանտա իշխանուհին, Արճէշի իր ապարան-

կը գովաբանեն շինուածքիս բարձր արուեստը, նուրբ եւ բոլոր գիւրերս, մագաղաթեայ թերթերս, արծաթէ կազմս, ականակուռ եւ գունաւոր գոհարներով զարդարուած դէմքս, մետաքսէ աստառս, նրբավրձին լուսանցազարդերս, կիսախորան անուանաթերթս, ինչպէս նաեւ զարդարանքիս գլուխ գործոցները՝ Մատթէոսի, Մարկոսի, եւ Յովհաննէսի դիմապատկերները: Ափսոս Ղուկասը կը բացակայի: Դարեր առաջ անծանօթ, կասկածաւոր ստուեր մը հեռացուցեր էր զայն ինձմէ:

Բարի լոյս Երեւան

Ապակի ցուցափեղկի մէջ եմ հիմա. մեծ պատիւ ինծի համար: Ես վարժ էի առանձնութեան: Հինգ հարիւր տարուայ կեանքիս մէջ աւելի շատ մութն եմ տեսեր քան լոյսը: Հողի տակ ալ ապրած եմ: Կը յիշեմ, տէրս գիս ծառի մը տակ պահեր էր, մինչեւ որ լոռերը, ա՛խ այդ լեռնաոճակ, անհնազանդ լոռերը, անցնին երթան մեր գիւղէն:

Hosted by the Engerayin Tivan

Hookah & Mazza NIGHT

April 11th, 2026 at 8PM

DJ, Dance, Mazza, Drinks & Hookah!

Signature Hookah Lounge
8660 Foothill Blvd, Sunland, CA 91040

RSVP
Aline 626-486-7662
Sebouh 818-325-6123

Donation \$60

ԳՈՒՍԱՆ ՇԵՐԱՄ՝ ԻՐ ՍԻՐԱԲՈՐԲ ԵՐԳԵՐՈՎԸ ԳԱՐՆԱՆԱԿԻՄ

ՅԱԿՈԲ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

20 Մարտին, իր սիրաբորբ ու սիրավէր երգերովը ոսկեղջիւր ժամանակներու աշխարհը լեցուցած, իր յուզումնավառ քնարովը համամարդկային սէր ու խաղաղութիւն արարած եւ աշուղական երգ-մեղեդիներու անգուզական վարպետներէն Գուսան Շերամ (Գրիգոր Տալեան Կարապետի՝ բուն անունով, Ալեքսանտրապոլ, 20 Մարտ 1857 - ս Երեւան, 3 Յուլիս 1938), երբ քինավառ-ուզամաշունչ գործողութիւններէ հեռու այս գարնանամուտին կը բոլորէ իր ծննդեան 169-ամեակը, աշխարհագոր բանակներ աքլորամարտի ելած ու իրենց աշխարհակուլ մոլորցքովը տարուած, այսօր դեռ կը շարունակեն հիմնայատակ աւերել քաղաքներ ու մայրաքաղաքներ, քաղաքակրթական օրրաններ, սպառնալով ոչնչացնել իրար եւ խաղաղասէր ժողովուրդներ՝ քանդելով իսկ իրենց պատնէշներն ետութեանց, հեզնելով եղբայրական սէրով ապրելու, կենակցելու, իրարահանդուրժողական ըլլալու միակ իրատեսական ելքը...:



«Դուն իմ Մուսան Ես», «Նա Մի Նազ Ունի», «Աչքդ Խումար», «Ալ Ու Ալուան Ես Հագել», «Արդէն Մուլն Ընկել է», «Թառ Դոշիս», «Անման Փերի», «Էլի Երկինս Ամպել է», «Անջիգեար Եար», «Սեւ Ամպերը Հայոց Երկինք Պատեցին», «Մէջս Կեանք Չմնաց», «Զով Գիշեր», «Մի Բալա է», «Գնա՛, Բլբուլ», «Մարալ Զան, Հեզ Արի», «Ալղանաթ Ղուշ Ես», «Անդրանիկին - Իբրեւ Արծիւ Սաւառնում Ես Լեռ Ու Ժայռ», «Զէյթունցիների Քայլերգը», «Քեզանից Մաս Չունիմ», «Զուլումն Իջաւ՝ Հօրս Տունը Կործանեց», «Շորորա», «Սիրուններ՛ր, Մի՛ք Նեղանայ», «Սարեր, Կ՛ողաչեմ», «Պարտէզում Վարդեր Բացուած» եւ դեռ շատ ու շատ սիրային, հայրենասիրական երգերը:

Յիրաւի, նորարար երգաստեղծութեան այն Աստուածառաք տաղանդը որ աւշայրդեցաւ Գուսան Շերամի մէջ անոր կեանքի վաղ տարիներէն, երիտասարդական տարիներէն զինք պարագրկեց իր ծննդավայր Ալեքսանտրապոլի երգահանդէսներու մթնոլորտը, աշուղական երգերու բազմաթիւ մրցոյթներով յայտնի Տալեաններու սրճարանը:

Տալեաններու գերդաստանը ինքնուս քանքարաւոր երգիչներ ու երաժիշտներ է ծնած: Ապագայ Գուսան Շերամի հայրը՝ Կարապետ Տալեանը, որդին աշուղ Քեամալի, նաեւ Շերամի հօրեղբայրը, երաժիշտ-նուագողի իրենց երկնատուր օձախը, այսպէս, կը կտակէին պատանի Գրիգորը, որ փոքր տարիքէն չկամութիւն ցուցաբերելով զանազան արհեստներու (փայտագործութիւն, հիւսն, եւայլն) նկատմամբ, իր ինքնակենսագրութեան եւ յուշերուն մէջ յետագային գրած է, թէ իր ձեռքէն վար չէր ձգեր թառը, կը նուագէր՝ ցերեկը խառնելով զիշերին, բարկացնելու, զգուցնելու՝ աստիճան ծնողները, մինչեւ իսկ մոռնալով իր գիշերային քունն ու հանգիստը:

Անուանի բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեան հմայուելով Գրիգոր Տալեանի շերամանման, «մետաքսահիւս» մեղեդիներուն՝ զայն կը կոչէ Շերամ, որ շուտով տիրապետելով աշուղական դասական արուեստի հիմնական օրինաչափութիւններուն եւ իր ստեղծագործութեան ինքնահաստատման շրջանին որդեգրելով ի՛ր սկզբունքը՝ կը հրաժարի աշուղական կաղապարուած մեղեդիներէն եւ իր իւրաքանչիւր բանաստեղծութեան համար տակաւ առ տակաւ կը յօրինէ իւրօրինակ, հոգեգրաւ մեղեդիներ: Այս առումով Շերամ կը կոչուի երգահան, որուն սրտամօտիկ մեղեդիները իրենց յօրինման պահէն մինչեւ այսօր խորապէս կը յուզեն ունկնդիրը՝ իրենց արտայայտչական վեհ ու գեղարուեստական գարնանաբոյր յատկանիշերուն համար:

Ո՞ր հայ երաժշտասէրը, օրինակի համար, իր անխառն հիացքը չէ արտայայտած լսելով Շերամի

Օրինակ մը բերելով՝ «Պարտէզում Վարդեր Բացուած» երգը, սիրոյ հարազատ զգացականութիւնն ու գունաւորումը մարմնաւորող այս մեղամաղձոտ, հոգեթով երգը, որ մինչեւ այսօր կը հանդիսանայ հայրենի վաստակաւոր մեներգիչներու՝ յատկապէս Ռուբէն Մաթեւոսեանի երգացանկի գլխաւորներէն մին, պիտի ընդգծել, որ աւելի քան 145 տարուայ կեանք ունի: Երաժշտագէտ Ալեքսանտր Մխիթարեանց, 1880-ին իր հրատարակած երգարանին մէջ արդէն տեղ տուած էր 22-ամեայ երգաստեղծ ու երգահան Գուսան Շերամի յիշեալ երգին, որ յետագային՝ 1900-ին ալ լոյս տեսաւ ու ողողեց հրապարակը: Ահա բոլորին ծանօթ այդ գեղեցիկ եւ սիրուած երգին խօսքերը.-

Պարտէզում վարդեր բացուած
Կը սպասեն սոխակի.
Առանց սոխակ թառամած,
Կարօտ են պսակի:

Արդեօք ո՞վ է, դուռն է թակում,
Ա՛խ, սիրտս կը դողայ,
Սիրուհիս ո՞ր է գնում,
Ա՛խ, սիրտս կը խաղայ:

Գետակի ալիքները
Գնում են խայտալով,
Սիրահարի աչերից
Արտասուք թափելով:

Սիրուհին տանը նստած
Սպասում է եարին.
Քնարը ձեռքին բռնած
Նուագում լալազին:

Իր ինքնակենսագրութեան մէջ Շերամ գրած է. «22 տարեկան

հասակիս մէջ արդէն կնիկ ունէի: Խանգարեցին միանգամայն: Տեսալ դուրգեարու թիւնով չեմ կարող ապրել, բարեբախտաբար Չոնկուր Յակոյի ընկերը բաժանուեց, գնացի Յակոյի հետ ընկեր դառայ, որը երեւելի ճիւղաւոր (Քամանչա նուագարանի անուանումներէն մէկը) էր ածում, այնպէս որ շատ շուտ դարձայ Լենինականում յայտնի թառիստ Տալոյեց Գոգոր», այսինքն՝ թառահար Տալեան Գրիգոր:

Կիւմրեցի երեւելի դէմքեր իրենց ծննդավայրի հանճարեղ երաժիշտին՝ Գուսան Շերամի մասին կը պատմեն, թէ մինչեւ այսօր առանց Շերամի երգերու հնչիւններու բարձրացմամբ ո՛չ մէկ կիւմրեցի աղջիկ կ'ուզէ հարս երթալ: Իսկ կիւմրեցի մեծանուն բանաստեղծ Աւետիք Իսահակեան հետեւեալը վկայակոչած է Շերամի մասին. «... Բոլոր ժամանակներու սիրուց այրած ջահէնները կ'ըսէին, որ մեռնելը ցաւ չէ, ցաւը՝ Շերամի երգերը չլսելն է»:

Իրօք, Շերամի ինքնատիպ երաժշտամտածողութեան հանդէպ հիացքով են արտայայտուած իր ժամանակի բազմաթիւ երաժիշտներ: Ուշագրաւ է նաեւ Կոմիտասի հիացումն ու գնահատանքը նկարագրող մէկ դրուագը 1905-ին, Շերամի ստեղծագործութեան մասին: Շերամ կը պատմէ, թէ յիշեալ թուականի գարնան կը հրաւիրուի էջմիածին՝ մասնակցելու Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան համագումարին, որուն աւարտին ան ելոյթ կ'ունենայ մենահամերգով: Այնտեղ գտնուած է նաեւ Կոմիտաս, որ իր հիացումը արտա-

յայտելով Շերամի կատարողութեան հանդէպ՝ զայն յաջորդ օրն իսկ կը հրաւիրէ Գեորգեան ձեմարան, ելոյթ ունենալու ուսանողներուն համար: Շերամ կը նշէ, որ այդ համերգը արժանացած է շատ մեծ գնահատանքի: Կոմիտաս եւս գնահատել է ու խրախուսել է ետք Շերամը, վերջինէն խնդրած է որ շարունակէ յօրինել երգեր՝ յատկապէս «Ալ Ու Ալուան Ես Հագել» երգին ոճով:

Իսկ Շերամի երգարուեստի բե՞րքը: 1902-1915 թուականներուն, Ալեքսանտրապոլի մէջ լոյս կը տեսնեն մեծ Գուսանին բանաստեղծութիւններու 5 ժողովածուները.- «Քնարը» (1902), «Գանգատի Շանթեր» (1905), «Սէր Եւ Կուր» (1907), «Անջուր Պարտէզ» (1913), «Անգուսպ Արշաւ» (1915):

Գուսան Շերամի ստեղծագործութիւններով իրենց աշխատասիրութեամբ զբաղած են խորհրդահայ բազմաթիւ երաժշտագէտներ, որոնք սակայն մինչեւ այսօր չեն կրցած լիարժէք գնահատական մը ներկայացնել այս ինքնատիպ Գուսանի մեծ վաստակին մասին:

Արգարեւ, Շերամագիտութիւնը ունի աւելի խոր ու բազմակողմանի ուսումնասիրութեան կարիք: Գուսանին ոսկեցոյլ, համամարդկային հոգեթով խոհականութեամբ տրոփուն երգերուն, արեւելեան տաք ու գորովալիւր մեղեդիներուն որքան հայաստանի՛ նո՛յնքան ալ համայն հայութեան հոգիները հեռաւոր ափերու մէջ ծարաւն ունին միշտ, այնպա ծարաւ՝ անոնց յաւերժաթիւր ու կենեղուտ ամբերոսը ըմբռնելու: «Մաղիկ»-«Աղթամար»

ՇՈՒՐԻՉԿԱՆԻ ԱԼԵՏԱՐԱՆԸ



Շարունակուած էջ 14-էն

հնչեց եօթը անգամ: Եօթը թամբած նժոյզներ վրնջացին անհանգիստ: Եւ եօթը բանակ եկաւ մեր սարը պաշարեց: Ցնցուեցաւ Արճեշ քաղաքը: Բզնունեաց ծովը ալեկոծուեցաւ: Սիփան լեռը թփրտաց: Աղջամուղջի մէջ արծաթափայլ պայտեր եկան ու հեռացան: Յանկարծ, խիտ փոշիի մէջ յայտնուեցաւ տէրս՝ Տէր Գրիգորի տասնմէկերորդ ժառանգորդը: Ան զիս փաթթեց սպիտակ պատեանի մէջ, առաւ իր թեւի տակ եւ շտապեց եկեղեցի: Եկեղեցի մտեր էին նաեւ անհեկուած կիներ, մանուկներ եւ ծերեր: Մնացի աւանդատան մէջ: Ամբողջ գիշեր եւ լսեցի լած, կոծ եւ աղօթք: Յաջորդ օր տէրս վերադարձաւ: Զինուոր-

ներ կային իր հետ: Կը խօսէին պարսկերէն: Դարձաւ ժողովուրդին եւ բացատրեց, թէ Շահ Աբբասի հրամանն է՝ պէտք էր տեղափոխուիլ: Տէրս մտաւ աւանդատուն, զիս համբուրեց, նախ փաթթեց թաւեայ ծածկոցով, ապա հացի եւ պանիրի հետ այծի մորթի շինուած անջրանցիկ տիկի մը մէջ դրաւ եւ իր մէջքին կապուած պահեց: Տասնեակ հազարաւոր գաղթականներուն յորդորեց, որ վստահին իմ գորութեանս, գօտեպնդուին, քաջալերուած մնան, ու, ձեռք ձեռքի բռնած, քաջաբար անցնին Արաքսը: Երբ արեւը կը հասնէր իր կատարին անոնք քալելով, իսկ ես ձիու վրայ ճամբայ ելանք դէպի Արաքս՝ Պարսկաստան մտնելու համար:

(Շարունակելի)

Հանդիսութիւն Նուիրուած Պաղտատի Կոմիտաս՝ Երգչախումբին եւ իր Խմբավար Կարապետ Քիշմիշեանին



Պաղտատի Կոմիտաս երգչախումբի նախկին անդամները

ԱՐԱՍ ՔԵԹԵՆՃԵԱՆ

Փետրուար 22-ի երեկոյան ժամը 5:00ին հոծ թիւով Լոս Էնճըլլասայի հաւաքուած էին Հայ Կաթողիկէ համայնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կից դահլիճը մասնակցելու Պաղտատի Հայ Երկան Երիտասարդաց Միութեան (ՊՀԵՄ) անցեալ դարու գոհարներէն՝ Կոմիտաս քառաձայն երգչախումբին եւ անոր հիմնադիր ու խմբավար Կարապետ Քիշմիշեանի յիշատակին նուիրուած գրական-գեղարուեստական երեկոյին:

Ձեռնարկը, որը կը հովանաւորէր Համագգայինի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը, կազմակերպուեցաւ նախաձեռնութեամբ Քալիֆորնիոյ Իրաքահայ Մշակոյթի Յանձնարարներէն: Երեկոն սկսաւ Հայր Իգնատիոս վրդ. Աբբասեանի արտա-

հիմնադրութեան եւ ատոնց կարեւորութիւնը՝ Կրօնքը, Մայրենի լեզուն եւ հայ մշակոյթը պահելու վսեմ գործին մէջ, որոնցմէ մէկն եղաւ ՊՀԵՄ Միութիւնն ու անոր սիւներէն մին՝ 1953 թուականին կազմուած Կոմիտաս Երգչախումբը:

Իրաքահայ թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աւագ Արք. Ասատուրեանի, այս առիթով ուղարկած բովանդակալից տպաւորութիւններն ու օրհնութեան խօսքը ընթերցեց Մարալ Կարապետեան՝ Ալուճեանը:

Ներկաներու ուշադրութեան պարբերաբար յանձնուեցան կազմակերպիչ յանձնախումբի կողմէ ձեւաւորուած երկու տեսաերկեր Կոմիտաս երգչախումբի պատմականի եւ խմբավար Կարապետ Քիշմիշեանի կեանքի ու գործունէութեան մասին: Երգչախումբը իր յիսուն տարիներու կեանքի տեւո-

ներուն մէջ:

Յիշատակութեան արժանի է, որ 1955 եւ 1962 թուականներուն երգչախումբը խմբավարած է Կոմիտաս վարդապետի ուսանող՝ Բարսեղ Կանաչեանը:

Ուրախալի էր որ Այս միջոցառումին իրենց մասնակցութիւնը բերին Կոմիտաս երգչախումբի նախկին անդամներէն Արշամ Պապէրեանը եւ Վարդգես Չոլաքեանը, որոնցմէ իւրաքանչիւրը ելոյթ ունեցաւ երկու երգով:

Պարուսոյց Անուշ Մարգարեանի հետեւողութեամբ, «Անուշ» պարարուեստի պարմանուհիներու խումբը «Ուզունտարա» եւ «Տարազ» պարերով գեղեցիկ ելոյթ մը

խօսքին մէջ անդրադարձաւ Կոմիտաս երգչախումբի հիմնադիր ու խմբավար Կարապետ Քիշմիշեանի յիսուն տարիներու նուիրական գործին մասին ըսելով որ անոր յիշատակն ու անունը վառ պիտի մնայ շատ շատերու սրտին մէջ: Ապա՝ ընթերցեց Համագգայինի կողմէ Քիշմիշեանին եւ Կոմիտաս Երգչախումբի անմար յիշատակին նուիրուած Գնահատանքի գիրը ու զայն յանձնեց այս առիթով Հայաստանէն ժամանած՝ հանգուցեալ Կարապետի զաւակներ Շանթ եւ Մարալ Քիշմիշեաններուն:

Կը կարեւորենք յիշել, որ հանգուցեալ Կարապետ Քիշմիշեանը լման նուիրուածով ու զոհողութեամբ,



ունեցաւ:

Մրազրիւ ընդգրկեց նաեւ տեսաերկ մը երգչախումբի երբեմնի անդամ-անդամուհիներէն՝ Ալյէր Չագարեանի, Վիքի Քէշիշեանի եւ Արա Քիշմիշեանի այս առիթով արտայայտած սրտաբուխ տպաւորութիւնները:

Օրուան պատգամն ու գնահատանքի խօսքը ներկայացուց Համագգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ ղոկտոր Տիգրան Պապիկեանը: Ան իր տպաւորիչ

ազնւօրէն եւ բծախնդրութեամբ կատարած էր Աստուածահաճոյց այս գործը եւ վայելած իրաքահայութեան սէրն ու յարգանքը:

Աւարտին, հանդէսին ներկայ եղող Երգչախումբի նախկին անդամները, ՊՀԵՄ միութեան նախկին վարչականներէն ոմանք, Համագգայինի ներկայացուցիչները, հանգուցեալ Կարապետ Քիշմիշեանի զաւակներն ու կազմակերպիչ յանձնախումբը՝ յիշատակի համար խումբով լուսանկարուեցան:



ասնած աղօթքով եւ օրհնութեամբ:

Բացման խօսքը ընթերցեց օրուայ հանդիսավար եւ յիշեալ երգչախումբի երկար տարիներու անդամ՝ Արամ Քէթիճեանը, որը հակիրճ ներածականով մը ներկայացուց Իրաքահայ թեմի պատմութիւնը սկիզբէն մինչեւ մեր օրերը: Անդրադարձաւ համայնքի եկեղեցիներուն, դպրոցներուն եւ մշակութային հաստատութիւններուն

ղութեան շարունակաբար ելոյթներ ունեցած է ազգասիրական, ժողովրդական, գեղջգական եւ դասական երգերով Պաղտատի Երիտասարդաց միութեան բեմէն, ինչպէս նաեւ ամեն տարի երգած է թէ Չատիկուայ, թէ ալ Հայոց Յեղասպանութեան յիշատակի պատարագները Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ: Երգչախումբը երգահանդէսներ տուած է նաեւ Պասրա եւ Քէրքուկ քաղաք-

Վարձու Յարկաբաժին Փաստինայի Մէջ

- Կեդրոնական շրջան
- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ Pasadena City College-ի մօտ:
- Երկրորդ յարկ
- Յարակից լուացքի մեքենայ
- Մէկ ինքնաշարժի կանգառ
- Խաղաղ եւ հանդարտ շրջան
- Ճաշարաններու մօտ

Յաւելեալ մանրամասնութեանց համար դիմել, (626) 351-5252

JOIN US FOR OUR

KIDS PAINTING CLASSES

CLASSES START JANUARY 9, 2026

EVERY FRIDAY AT 5PM WITH TEACHER MANIA GERMAGIAN

AEBU CENTER
1060 N ALLEN AVE. PASADENA, CA 91104

REGISTER NOW!
WITH NOR SEROUNT/AREV
(626) 738-5639

Հայ Ինքնութեան Եւ Լեզուի Պահպանման Նուիրում Երեկոյ Գահիրէի Մէջ



Շաբաթ, 7 Մարտ 2026-ի երեկոյեան ժամը 7-ին, Հելլոպոլիսոյ (Գահիրէի) «Պըլլըքտանեան» սրահի մէջ՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարանի կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի, տեղի ունեցաւ յատուկ ձեռնարկ՝ նուիրում Արաբական Ծոցի երկիրներու Աստուածաշունչի Ընկերութեան ընդհանուր քարտուղար Դոկտ. Հրայր Ճէպէճեանի՝ «Հայկական Ազգագրական Պատկերներ՝ Տեսիլք, Կամք եւ Յոյս» հատորի ներկայացումին:

Րոող՝ Դոկտ. Արտա Պոյնէրեան-ձէպէճեան: Որպէս ընկերակցութեան ղեկավար Դոկտոր, ան խորացաւ հատորի ստեղծման դրդապատճառներուն եւ անոր կառուցուած քայլին առանձնապատկութիւններուն մէջ: Դոկտ. Արտա անազանգային, բայց եւ յուսադրող շեշտադրումներով խօսեցաւ արեւմտահայերէնի պահպանման հրամայականին մասին: Ան ընդգծեց, որ լեզուն սոսկ հարողակցութեան միջոց չէ, այլ՝ լեզուամտածողութիւն, զոր պէտք է ամէն գնով փոխանցել նոր սերունդին՝ դիմազրաւելու համար համաշխարհայնացման բերած լեզ-



Յայտագրի բացման խօսքը կատարեց Տիկին Շաքէ Մարգարեան՝ որ բովանդակալից կերպով ներկայացուց Դոկտ. Հրայրի բազմամեայ ու բազմաշերտ գործունէութիւնը: Ան առանձնապատուկ կերպով մատնանշեց հեղինակի նուիր-



ուական եւ մշակութային ձուլման վտանգները: Երեկոյի առանցքային պահը ինքնին հեղինակի՝ Դոկտ. Հրայր Ճէպէճեանի ելոյթն էր: Ան ներկայեցուն հետ բաժնեկցեցաւ հետաքրքրական գրոց-քննարկում մը՝ «Հայ Ըլլալու Ընտրութիւնը Համաշխարհայնացած Աշխարհին Մէջ» խորագրով: Հեղինակը անդրադարձաւ իր հեղինակած հայակերտումի երեք հատորներուն, որոնք կը հանդիսանան Սփիւռքի հայու կեանքի իւրաքանչիւր հայելին, սփիւռքահայութեան կեանքի առանձնապատկութիւններուն, հայապահպանումին, ազգային պատկանելիութեան, երկքաղաքացիութիւն ունեցող անհատներու մտածելակերպին, անհատի մը բազմաշերտ ինքնութեան եւ այլ խնդիրներու մասին: Իր խօսքին մէջ ան շեշտեց, որ այսօր հայ մնալը գիտակցուած ընտրութիւն է, որ կը պահանջէ կամքի ուժ, տեսիլք եւ անսպառ յոյս:



Րումը հայապահպանման գործին, մայրենի լեզուի պահպանման եւ Սփիւռքի տարբեր օճախներու մէջ հայ կեանքի ու մշակութի կենսունակութեան փաստագրման: Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ գիրքի խմբագիրն ու համազ-

ընտանեակներու վաստակը, զայն որակելով որպէս «տաղանթ մտաւորականի եւ նուիրեալ հայու» տիպար: Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազանը շեշտեց, որ նմանատիպ հատորներու հրատարակութիւնը միայն մատենագիտական իրագործում չէ, այլ՝ հոգեւոր ու ազգային զարթոնքի կոչ: Ան յորդորեց ներկայներուն տէր կանգնել հայկական արժէքներուն եւ պահպանել մեր ինքնութեան հիմնասիւն հանդիսացող լեզուն ու հաւատքը: Ձեռնարկը աւարտեցաւ Սրբազան Հօր «Պահպանիչ» ով, որմէ ետք տեղի ունեցաւ մակագրութիւն եւ հիւրասիրութիւն: Ներկայները իրենց սրտագին մաղթանքները փոխանցեցին Դոկտ. Ճէպէճեանին՝ մաղթելով անոր քաջաւորութիւն եւ նորանոր գրական ու ազգային նուաճումներ:

Շաբաթոյ Դպրոցներու Ամենամեայ Ժողովը

Շարունակուած էջ 8-էն

մարտին շաբաթօրեայ դպրոցներու տնօրէններու ժողովներ: Վերջին հանդիպման ընթացքին ելոյթ ունեցաւ շաբաթօրեայ դպրոցներու կրթական յանձնարումի ատենապետ Դոկտ. Էլլի Անդրէասեանը: Ան ներկայացուց դպրոցներու կրթական ծրագրի զարգացման հիմնական սկզբունքները: Հարկ է նշել, որ Դոկտ. Անդրէասեանն է մշակած դպրոցներու ամբողջական ուսումնական ծրագիրը՝ մայրենի լեզուէն մինչեւ հայկական մշակութի նիւթերը, դասարան առ դասարան:

տեն ուսումնական տարին նոյն թուականներով, կը գործածեն առաջնորդարանի հրատարակած դասագիրքերը եւ կը գործեն միասնական ուսումնական ծրագրով: Բացի այդ, դպրոցները կ'ենթարկուին WASC կոչուած միջազգային կրթական կազմակերպութեան որակաւորման չափանիշներուն:

Դպրոցը՝ ազգային առաքելութիւն

Ժողովի աւարտին իր պատգամ փոխանցեց Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ, բարձրաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրտէրեանը: Շաբաթօրեայ դպրոցները առաջնորդ հօր տեսլականի ծնունդն են եւ անոր համար կը մնան սիրելի եւ հոգատար ուշադրութեան արժանի կրթական կառույցներ: Առաջնորդն ընդգծեց. «Հայկական դպրոցը պէտք է հասանելի ըլլայ բոլոր հայ աշակերտներուն: Դասարաններուն մէջ անհրաժեշտ է կիրառել ժամանակակից մեթոտաբանական մօտեցումներ, որպէսզի աշակերտը սիրով գայ դպրոց: Շաբաթօրեայ վարժարաններն իրենց առաքելութեամբ եւ կրթական որակով չեն զիջիր ամեօրեայ հայկական դպրոցներուն»:

Իր խօսքին մէջ ան շեշտեց. «Անհրաժեշտ է զարգացնել հայեցի մտածողութիւնը եւ դասարաններուն մէջ ստեղծել ազատ մտքերի փոխանակութեան մթնոլորտ: Աշակերտները պէտք է ունենան հարց ու պատասխանի ժամանակ, որպէսզի մտածեն, քննարկեն եւ ձեւաւորեն իրենց հայեցի մտածողութիւնը»:

Նոր ծրագիրներ եւ ապագայի տեսլական

Այնուհետեւ խօսք առաւ Արեւմտեան թեմի շաբաթօրեայ վարժարաններու հոգեւոր տեսուչ, բարեշնորհ Յովհաննէս սարկաւազ Գումրուեանը: Յարկ է նշել, որ Յովհաննէս սարկաւազը նաեւ աշխարհի ամէնէն մեծ միօրեայ վարժարանին՝ «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցին տնօրէնն է, ուր կը սորվին 350-է աւելի աշակերտ: Ան ներկայացուց 2026-27 ուսումնական տարուան ծրագիրը եւ տեղեկացուց, որ Օգոստոս 8-ին պիտի կազմակերպուի ուսուցիչներու վերապատրաստման յատուկ դասընթացք՝ լեզուաբաններու, գրականագէտներու եւ ազգագրագէտներու մասնակցութեամբ: Յովհաննէս սարկաւազ ընդգծեց նաեւ, որ թեմի բոլոր շաբաթօրեայ դպրոցները կը հետեւին միասնական կրթական չափանիշներու: Անոնք կը սկսին եւ կ'աւար-

Ան նաեւ գնահատանքով անդրադարձաւ դպրոցներուն մէջ կամաւորաբար ծառայող 15-20 տարեկան երիտասարդներուն՝ ընդգծելով, որ անոնց մէջէն պիտի ձեւաւորուին ապագայի ուսուցիչները:

Նոր հրատարակութիւններ

Ժողովի ընթացքին առաջնորդը նաեւ աւետեց նոր գիրքերու հրատարակութիւնը: Առաջնորդարանը կը պատրաստուի լոյս ընծայել. «Աստուածաշունչական պատմութիւններ» - 4 հատոր . «Արեւմտեան թեմի պատմութիւնը» - 3 հատոր Առաջնորդարանն արդէն իսկ հրատարակած է բազմաթիւ գիրքեր: Ժողովը աւարտեցաւ կառուցողական քննարկումներով, առաջարկներով, զաղափարներու փոխանակութեամբ եւ պահպանիչ աղօթքով:

գնահատեց Դոկտ. Հրայր Ճէպէճեանի տասնամեակներու վաստակը, զայն որակելով որպէս «տաղանթ մտաւորականի եւ նուիրեալ հայու» տիպար: Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազանը շեշտեց, որ նմանատիպ հատորներու հրատարակութիւնը միայն մատենագիտական իրագործում չէ, այլ՝ հոգեւոր ու ազգային զարթոնքի կոչ: Ան յորդորեց ներկայներուն տէր կանգնել հայկական

արժէքներուն եւ պահպանել մեր ինքնութեան հիմնասիւն հանդիսացող լեզուն ու հաւատքը: Ձեռնարկը աւարտեցաւ Սրբազան Հօր «Պահպանիչ» ով, որմէ ետք տեղի ունեցաւ մակագրութիւն եւ հիւրասիրութիւն: Ներկայները իրենց սրտագին մաղթանքները փոխանցեցին Դոկտ. Ճէպէճեանին՝ մաղթելով անոր քաջաւորութիւն եւ նորանոր գրական ու ազգային նուաճումներ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՐԱԶԴ



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԻՒՏԷՇԵԱՆ (1959-2026)

Սրտի դառն կսկիծով կը զուժենք մեր սիրեցեալ հօր, եղբօր եւ հարազատին՝ Յարութիւն Կիւտէշեանի մահը, որ պատահեցաւ Կիրակի, 8 Մարտ, 2026ին:

Թաղման եկեղեցական կարգը տեղի պիտի ունենայ 25 Մարտ, 2026ին առաւօտեան ժամը 10:45 ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաքելական եկեղեցոյ մէջ 2215 E Colorado Blvd, Pasadena, CA, 91107, որմէ ետք գերեզմանի կարգը Live Oak գերեզմանատան մէջ, 200 E Duarte Road, Monrovia, CA, 91016:

Սգակիրներ՝

Զաւակը՝ Պրն. Արա Կիւտէշեան

Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Կալի Կիւտէշեան

Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սօսի Սաղրեան եւ զաւակունք (Գանատա)

Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Եագուպեան եւ զաւակունք

Քոյրը՝ ալրի Տիկ. Սիրուն Թորոսեան եւ զաւակունք (Գանատա)

Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Ճէք եւ Թագուհի Քասսապ եւ զաւակունք (Աւստրալիա)

Քոյրը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Սեդա Քէշիշեան եւ զաւակունք (Գանատա)

Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ռեպեքա Քոճեան Կիւտէշեան եւ զաւակունք

Հօրաքոյրը՝ Տիկ. Լորիս Սաֆար

Զոքանչը՝ Ալրի Տիկ. Մարիթան Պէքմէզեան

Աներորդին՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Պէքմէզեան եւ զաւակունք

Եւ համայն Կիւտէշեան, Պէքմէզեան, Փալանճեան, Ասլանեան, Ռայլի, Քուտիշեան, Տէր Մովսէսեան, Հարմանտեան, եւ Ապուզարեան ընտանիքները եւ հարազատները:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹ ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. Փարամազ մասնաճիւղի վարչութիւնը եւ անդամները ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար զաւակներուն՝ Արա եւ Շահէ Կիւտէշեաններուն եւ եղբօր՝ Յակոբ Կիւտէշեանին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹ ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի վարչութիւնն ու ֆուլթայլի խումբի անդամները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար զաւակներուն՝ Արա եւ Շահէ Կիւտէշեաններուն եւ եղբօր՝ Յակոբ Կիւտէշեանին:

Արեւմտահայերէնը Դարձնել

Շարունակուած էջ 14-էն

Լեզուով կամրջել տարբեր գաղութներու երիտասարդները՝ անոնց մէջ արթնացնելով հաւաքական պատկանելիութեան զգացումը: Տեսագրողներու միջոցով կամ «Ձուձ» հարթակով կապել աշակերտները այլ երկիրներու հայ տարեկիցներուն հետ: Ասիկա ցոյց կու տայ, որ իրենց լեզուն սահմանափակուած չէ միայն տեղական դպրոցով, այլ մաս կը կազմէ աշխուժ ու համաշխարհային ցանցի մը: Երբ հայերէնը կը յայտնուի իրենց ամէնօրեայ գործածած հարթակներուն վրայ, անիկա կը դադրի ըլլալ միայն «պապենական» կամ «հին» լեզու: 5.- Դպրոց-ընտանիք-համայնք

եռամիասնութիւն Լեզուի պահպանման գործընթացը պէտք է դուրս գայ դասարանի պատերէն եւ դառնայ հաւաքական ճիգ: Դպրոցները պէտք է ստեղծեն «օժանդակութեան հարթակներ» ծնողներուն համար՝ տրամադրելով պարզ նիւթեր, որոնք կ'օգնեն նոյնիսկ ոչ հայախօս ծնողներուն տան մէջ հայկական միջոցառումներու: Հրապարակային ձեռնարկներու, ակումբներու եւ դպրոցական միջավայրին մէջ հայերէն գրութիւններու միջոցով լեզուին տալ մշտական տեսանելիութիւն եւ շունչ: Օգտագործել սփիւռքահայ թերթերու առցանց լուրերը կամ «Երկրի լուր»-ի վրայ առկայ արեւմտահայերէն նախագիծները (ինչպէս՝

ՄԱՐԱԶԴ



ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ 15 Սեպտեմբեր 1944 - 10 Մարտ 2026

Խոր վիշտով կը յայտնենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆԻ մահը:

Հանգուցեալի թաղման արարողութիւնը պիտի կատարուի

23 Մարտ, առաւօտեան ժամը 9:00-ին, Forest Lawn Hollywood Hills, Old North Church (Կարմիր Եկեղեցի), 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA:

Հանգուցեալը իր ամբողջ կեանքը ընծայաբերեց խանդավառութեամբ եւ ամբողջական նուիրումով, ծառայելով հայկական համայնքին եւ եկեղեցոյ:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

Սփիւռքահայ ծանօթ մտաւորական եւ լրագրող Խաչիկ Ճանոյեանի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմը իր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ալրիին, զաւակներուն եւ մեր պաշտօնակից «Նոր Օր» շաբաթաթերթի խմբագրութեան, որուն մաս կը կազմէր ննջեցեալը:

Լոյս իր հոգիին:

Zarmanazan կամ Կրկնակ դասերը):

Մէկ խօսքով, արեւմտահայերէնը սոսկ հաղորդակցութեան միջոց չէ, այլ՝ կենսունակ կամուրջ մը, որ մեզ կը միացնէ մեր պատմութեան, մշակույթին եւ, կարեւորագոյնը՝ մեր ինքնաճանաչման: Խորախուսելով պատանիները, որպէսզի անոնք ստեղծագործեն մայրենիով՝ պատրաստելով վրովներ, հարցազրույցներ, թատերական պատկերներ ու թուային պարբերաթերթեր, մենք անոնց կը փոխանցենք լեզուի «տիրութեան» զգացումը: Երբ լեզուն կը դառնայ ընկերային շփման բնական միջոց՝ խմբային աշխատանքներու, խաղերու, եւ համասփիւռքեան փոխանակման ծրագիրներու, անիկա կը վերագտնէ իր կենսունակութիւնը: Ի վերջոյ, մեր նպատակն է ստեղծել այնպիսի միջավայր մը, ուր հայերէնը ոչ թէ պարտադրանք է, այլ՝ ստեղծագործելու եւ աշխարհի հետ հաղորդակցելու հպարտ ու արդիական ձայն:

Արեւմտահայերէնի կրթական վերածնունդը՝ մեր յաղթանակի ճանապարհը:

Եթէ ընտանեկան յարկը լեզուի բնական բնօրրանն է, ապա կրթօժախը այն կենսունակ միջավայրն է, ուր մեր մայրենին կը զրահաւորուի արդիականութեամբ: Սփիւռքեան պայմաններուն մէջ դպրոցը լոկ ուսումնական վայր չէ, այլ՝ ոգեշնչման աղբիւր, որ կը միացնէ սերունդները՝ կերտելով հայախօս ապագայ:

Մեր տեսլականն է արեւմտահայերէնը թրթռուն պահել՝ իբրեւ կենդանի, ստեղծագործ եւ աշխուժ հաղորդակցութեան լեզու՝ յատկապէս մեր այն աշակերտներուն համար, որոնք հայկական վարժարաններու երգիքին տակ կը կերտեն իրենց ինքնութիւնը: Այսօր հայ դպրոցը ընտրող իւրաքանչիւր աշակերտ թանկագին ներուժ մըն է, եւ մեր առաքելութիւնն է այդ սերունդին ջամբել այնպիսի լեզուական հարստութիւն, որ արեւմտահայերէ-

նը դառնայ իրենց առօրեայ ինքնարտայայտումի լուսագոյն ու հարազատ միջոցը:

Այս տեսլականը իրականացնելու համար կարեւոր է քաղել Մայքըլ Մաքսուելի փորձառութեան խորիմաստ պատգամը: Լեզուաբան Մաքսուելը, որ 2005-ին թաղանթ մեկնեցաւ ախա համայնքի լեզուն փրկելու, շուտով հասկցաւ, որ լեզուի գոյատեւման նախապայմանը զայն խօսողին ապահովութիւնն ու առողջութիւնն է: «Գիւղացիները մոծակներու դէմ պաշտպանիչ ցանցեր չունին, եւ մանուկները ճանճերու պէս կը մեռնին: Հիւանդանոցի ծախսերուն համար դրամ չկայ, օդը սաստիկ տաք է, տուններուն մէջ պատառ մը ուտելիք չկայ, իսկ մալարիան իր հունձքը կը կատարէ»: Ան իր ծրագիրները վերագրասաւորեց՝ նախ կեդրոնանալով երեխաներու փրկութեան վրայ, գիտակցելով, որ լեզուի ապագան զայն հնչեցնող սերունդին մէջ է:

Նոյնպէս եւ մենք՝ սփիւռքեան մեր իրականութեան մէջ, կոչուած ենք մեր առաջնահերթութիւնները յտակարարելու: Մեր մեծագոյն ներդրումը պէտք է ըլլայ նոր սերունդի հայցի կրթութեան եւ հոգեկան կապի ամրապնդումը: Թերեւս թուի, թէ նոր ձեւերու որդեգրումը կը պահանջէ ահռելի միջոցներ, սակայն հայութեան համաշխարհային ներուժը անսպառ է: Մենք ունինք սփիւռքի հակայական փորձառութիւնն ու նուիրատուութեան ոգին, որոնք պատրաստ են թեւ ու թիկունք կանգնելու իւրաքանչիւր նախաձեռնութեան:

Մեր միասնականութեամբ եւ նպատակասլաց քայլերով մենք կրնանք երաշխաւորել արեւմտահայերէնի ամենօրեայ գործածութիւնը եւ պահպանումը: Վստահինք մեր պատանիներուն երեւակայութեան եւ գիտելիք գանոնք արդիական գործիքներով, որպէսզի մեր լեզուն հնչէ հպարտ, անկախ եւ յաւերժ ժամանակակից:

Յունահռոմեական Ռճի Ըմբշամարտի Մինչեւ 23 Տարեկաններու Եւրոպայի Առաջնութեան Արամայիս Յարութիւնեանը Եւ Սուրէն Աղաջանեանը Նուաճեցին Ոսկի Մետալ



Սերպիոյ մէջ աւարտին մօտեցող յունահռոմեական Ռճի ըմբշամարտի մինչեւ 23 տարեկաններու Եւրոպայի առաջնութեան մէջ Հայաստանի հաւաքականէն ոսկէ մետալ նուաճեց նաեւ Սուրէն Աղաջանեանը: 60 քկ. ծանրութեան կարգի եզրափակիչին ան երկու վայրկեաններու ընթացքին 9:0 արդիւնքով յաղթեց վրացի Գեորգի Քոչալիձէին եւ նուաճեց տիտղոսը: Ոսկի մետալ նուաճեց նաեւ 130 քկ. ծանրութեան կարգի Արամայիս Յարութիւնեանը: Հայաստանի ներկայացուցիչ Մանուէլ Խաչատրեան նուաճեց պրոնզէ մետալ 55 քկ. ծանրութեան կարգին մէջ:

«Քրասնոտարը» Յաղթեց Սպերցեանի Տուպլին Շնորհիւ



Ռուսիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 21-րդ հանգրուանին ախոյեան «Քրասնոտարը» հիւրընկալուեցաւ «Սոչիին» եւ յաղթեց 2:1 արդիւնքով Հայաստանի հաւաքականի աւագ, կիսապաշտպան Էտուարտ Սպերցեանի տուպլին շնորհիւ: 5-րդ վայրկեանին ան բացաւ հանդիպման հաշիւը՝ նշանակելով իր 50-րդ կողմ Ռուսիոյ Փրեմիեր Լիգային մէջ: Յաղթական կողմ Սպերցեան նշանակեց աւելացուած ժամանակի 5-րդ վայրկեանին՝ 11 մեթրանոց հարուածով:

Իրանի Հաւաքականը Պաշտօնապէս Դեռ Զե Զրաժարած 2026-ին Աշխարհի Բաժակին Մասնակցելէ

Ֆուտպոլի Իրանի ազգային հաւաքականը պաշտօնապէս չէ հրաժարած Յունիս-Յուլիս ամիսներուն Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Մեքսիքոյի եւ Գանատայի մէջ կայանալիք Աշխարհի Բաժակին մասնակցելէ: Այդ մասին յայտնած է Ասիայի ֆուտպոլային համադաշնակցութեան գլխաւոր քարտուղար Վինձոր ձոնը: «Հիմա շատ լարուած պահ մըն է: Իւրաքանչիւրը իր կարծիքը կը յայտնէ, սակայն հաւաքականի մասնակցութեան հարցին պատասխանատուն երկրի ֆուտպոլի համադաշնակցութիւնն է: Այս պահուն անոր դիրքորոշումը աշխարհի առաջնութեան մասնակցելն է: Անոնք կը ներկայացնեն Ասիայի ֆուտպոլային համադաշնակցութիւնը եւ մենք կը ցանկանք ու յոյս ունինք, որ անոնք կը մասնակցին աշխարհի առաջնութեան», - ըսած է ձոնը, ըստ Reuters-ի:



Ռաֆիկիայի Զեթ-Թրիկը Նպաստեց «Պարսելունայի» Յաղթանակին՝ 5:2

Սպանիոյ առաջնութեան 28-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելունան» իր դաշտին վրայ մրցեցաւ «Սելիլիաի» դէմ եւ յաղթեց 5:2 արդիւնքով: Հեթ-թրիկի հեղինակ դարձաւ պրագիլցի յարձակող Ռաֆիկիա: Ուշադրութիւն գրաւեցին նաեւ սպանացի կիսապաշտպան Տանի Օլմոն եւ փորթուկալացի պաշտպան Ժոաո Կանսելոն: «Պարսելունան» 70 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 4 կէտով կը գերազանցէ երկրորդ տեղը գրաւող «Ռէալը»: «Սելիլիա» 31 կէտով տասնչորսերորդ դիրքին վրայ է:



«Ռեալի» Յաղթանակը 4:1 Արդիւնքով

Սպանիոյ առաջնութեան 28-րդ հանգրուանին փոխախոյեան Մատրիտի «Ռէալը» ընդունեց «Էլչէին» եւ յաղթեց 4:1 արդիւնքով: «Ռէալը» 66 կէտով երկրորդ դիրքին վրայ է, իսկ «Էլչէ» 26 կէտով տասնեօթներորդ:

«Արսենալ» Յաղթեց «Էվերթընին», «Նիւքասլը»՝ «Չելսիին»

Անգլիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին փոխախոյեան Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալեց «Էվերթընին» եւ յաղթեց 2:0 արդիւնքով: 89-րդ վայրկեանին հաշիւը բացաւ Շուէտի հաւաքականի յարձակող Վիլքիթը ձիւթերէջը: Աւելացուած ժամանակի 7-րդ վայրկեանին երկրորդ կողմ նշանակեց անգլիացի կիսապաշտպան Մաքս Թաուսը: «Արսենալը» 70 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Մանչըսթըր Սիթի» 61 կէտով կը գտնուի յաջորդ դիրքին վրայ:

«Մանչըսթըր Սիթի» Ընդդէմ «Վեսթ Զեմ» Խաղը 1:1 Հաւասար

Անգլիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին «Մանչըսթըր Սիթի» հիւրընկալուեցաւ «Վեսթ Զեմին» եւ բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով՝ 1:1:

«Մանչըսթըր Եունայթըտ» Աւելի Ուժեղ Էր «Ասթըն Վիլային»

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 30-րդ հանգրուանին «Մանչըսթըր Եունայթըտ» «Օլտ Թրաֆորտի» իր մարզադաշտին վրայ ընդունեց «Ասթըն Վիլան» եւ յաղթեց 3:1 արդիւնքով: Մանչըսթըրեան խումբէն ուշադրութիւն գրաւեցին պրագիլցի կիսապաշտպան Կագեմիրոն, պրագիլցի յարձակող Մաթէուս Կունեան եւ սլովենացի յարձակող Փենյամին Շեշքոն: «Մանչըսթըր Եունայթըտ» 54 կէտով երրորդ դիրքին վրայ է, իսկ «Ասթըն Վիլա» 51 կէտով կը գտնուի յաջորդ դիրքին վրայ:

«Լիվըրպոլ» Վերջին Վայրկեանին Կորսնցուց Յաղթանակը

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 30-րդ հանգրուանին ախոյեան «Լիվըրպոլը» իր դաշտին վրայ մրցեցաւ Լոնտոնի «Թոթէնհեմին» դէմ եւ հիմնական ժամանակի վերջին վայրկեանին լորսնցուց յաղթանակի առիթը: Արձանագրուեցաւ Հաւասար՝ 1:1 արդիւնք: 18-րդ վայրկեանին հանդիպման հաշիւը բացաւ «Լիվըրպոլի» հոնկարացի կիսապաշտպան Տոմինիք Սոպոսլայը: 90-րդ վայրկեանին պատասխան կողմ նշանակեց «Թոթէնհեմի» պրագիլցի յարձակող Ռիչարլիսոնը:

«Ինթերը» Կորսնցուց Յաղթանակի Առիթը

Իտալիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթերը» Միլանի մէջ ընդունեց «Աթլանթային» եւ վերջին վայրկեաններուն կիրսնցուց յաղթանակը: Արձանագրուեցաւ ոչ ոքի՝ 1:1: 26-րդ վայրկեանին հաշիւը բացաւ «Ինթերը»-ի 20 տարեկան իտալացի յարձակող Ֆրանչեսքօ Էսպոզիթօն: Հայաստանի հաւաքականի նախկին աւագ Հենրիխ Մխիթարեան փոխարինմամբ դաշտ մտաւ 46-րդ վայրկեանին: 83-րդ վայրկեանին հաւասարեցուց Չեռնոգորիայի հաւաքականի յարձակող Նիկոլա Քրսթովիչը:

Աւելի առաջ Իրանի մարմնակրթութեան նախարարը բացառած էր Իրանի հաւաքականի Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ մրցիլը, սակայն միայն Մեքսիքոյի մէջ խաղալու պայմանով կողմ արտայայտուած էր աշխարհի առաջնութեան մասնակցութեան:

ՀԱՆ-ի Կալայի Ընթացքին Ամերիկեան Քաղաքական Դեմքեր Իրենց Զօրակցութիւնը Յայտնեցին Հայութեան Ու Հայաստանին

